Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի միջև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ**
**ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ**
**«ՔԱՋԱՐԱՆԻ ԹՈՒՆԵԼԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԸ**, միջազգային կազմակերպություն, որն ստեղծվել և իր գործունեությունն իրականացնում է Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության միջև 2006 թվականի հունվարի 12-ին կնքված «Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի հիման վրա, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, 050051, Դոստիկ պող., 220 հասցեում, Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարիչն է և հանդես է գալիս դրա մասնակիցների անունից և հանձնարարությամբ՝ ղեկավարվելով «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի պայմանագրով, «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցների կառավարման մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրով, ինչպես նաև Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի խորհրդի 2024 թվականի մայիսի 20-ի որոշմամբ (արձանագրություն թիվ 100), այսուհետ՝ **Կառավարիչ**, և

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ**, այսուհետ՝ **Ստացող**,

կնքեցին «Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին» սույն համաձայնագիրը (**այսուհետ՝ Համաձայնագիր**)՝ հետևյալի մասին.

## ՀՈԴՎԱԾ 1. ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԵԶՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1. Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (այսուհետ՝ **Հիմնադրամ, ԿԶԵՀ**) միջոցներից մասնակից պետությանը ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրերի Ստանդարտ պայմանները (այսուհետ՝ **Ստանդարտ պայմաններ**) (Համաձայնագրի թիվ 1 հավելված), որոնք Կառավարչի կողմից հաստատվել են «Հիմնադրամի միջոցների կառավարման մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետին համապատասխան (Եվրասիական զարգացման բանկի վարչության 2015 թվականի հուլիսի 22-ի թիվ 24/ԿԶԵՀ արձանագրություն) և Հիմնադրամի պաշտոնական փաստաթուղթն են համարվում՝ «Հիմնադրամի մասին» հիմնադրույթի 2-րդ հոդվածին համապատասխան:

1.2. Համաձայնագրում գործածվող եզրույթները և սահմանումներն ունեն նույն իմաստը, ինչ որ և Ստանդարտ պայմաններում:
Ի փոփոխումն կամ ի լրումն Ստանդարտ պայմանների՝ գործածվող որոշ եզրույթների իմաստը սահմանվում է Համաձայնագրի համատեքստում:

## ՀՈԴՎԱԾ 2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

2.1. Կառավարիչը Հիմնադրամի մասնակիցների անունից և հանձնարարությամբ Ստացողին Հիմնադրամի միջոցներից տրամադրում է ներդրումային վարկ՝ 200.000.000,00 (երկու հարյուր միլիոն) ԱՄՆ դոլարի չափով՝ Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար, որի նկարագրությունը ներառված է Համաձայնագրի թիվ 5 հավելվածում (այսուհետ՝ **Ծրագիր**):

2.2. Ներդրումային վարկը Ստացողին տրամադրվում է Ստանդարտ պայմանների 2.01 և 2.05 բաժիններին համապատասխան միջոցների հատկացման հայտերի հիման վրա՝ միջոցների հատկացման հայտում նշված հաշվին դրամական միջոցների փոխանցման միջոցով՝

Համաձայնագրի թիվ 8 հավելվածում նշված՝ միջոցների հատկացման ընթացակարգերին համապատասխան:

Ստացողը ներդրումային վարկի ստացման և Ծրագրի ֆինանսավորման նպատակներով՝ Համաձայնագրի 4-րդ հոդվածի 4.1 կետի «ժ» ենթակետում նշված՝ Ծրագրի իրականացման խմբի անունով Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարանում Կառավարչին բավարարող պայմաններով բացում և վարում է վարկի արժույթով առանձին հաշիվ (այսուհետ՝ **Հատուկ հաշիվ**), ներառյալ՝ հաշվի պատշաճ պաշտպանության ապահովումը ցանկացած հայցից, բռնագրավումից, արգելանքից և ոչ նպատակային օգտագործումից:

Հատուկ հաշվին ներդրումային վարկի միջոցների մուտքագրումը և Հատուկ հաշվից միջոցների ծախսումն իրականացվում է Համաձայնագրի թիվ 8 հավելվածում նշված՝ Կառավարչի կողմից սահմանված միջոցների հատկացման ընթացակարգերին համապատասխան:

2.3. Ներդրումային վարկի միջոցներն Ստացողին տրամադրվում են Համաձայնագրի թիվ 4 հավելվածին և Ստանդարտ պայմանների 2.02 և 2.04 բաժինների դրույթներին համապատասխան՝ Համաձայնագրի թիվ 7 հավելվածի պահանջների համաձայն՝ Ստացողի կողմից կնքված՝ ներդրումային վարկի միջոցների հաշվին ֆինանսավորման ենթակա պայմանագրերով ապրանքների, աշխատանքների և ծառայությունների հիմնավորված արժեքի վճարման նպատակով Ստացողի թույլատրելի ծախսերի վճարման համար:

2.4. Չի թույլատրվում ներդրումային վարկի միջոցների օգտագործումը Ստանդարտ պայմանների 2.03 բաժնում նշված հարկերի ֆինանսավորման և վճարման համար:

2.5. Ներդրումային վարկի համապատասխան մասի տրամադրման ամսաթիվն է Կառավարչի կողմից Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված թղթակցային հաշվից կամ Ստանդարտ պայմանների 3.04 բաժնի դրույթներին համապատասխան դրամական միջոցների դուրսգրման ամսաթիվը:

2.6. Ներդրումային վարկը Ստացողին տրամադրվում է մինչև վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը, որը նշվում կամ սահմանվում է Համաձայնագրի թիվ 2 հավելվածին և Ստանդարտ պայմանների 1.03 բաժնի «զ» կետին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՈՒՄԸ

3.1 Ստացողը գումարները վճարում է Ներդրումային վարկի սպասարկման և մարման հաշվին (**Վարկի գծով վճարումներ**)՝ ներդրումային վարկի պայմաններին համապատասխան (Համաձայնագրի թիվ 2 հավելված)՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի պահանջները (3.01 բաժնի «բ», «դ» և «ե» ենթակետերը չեն կիրառվում), ինչպես նաև Ստանդարտ պայմանների 3.04-3.06 բաժինները:

Ստացողը Ներդրումային վարկի գծով Հիմնական պարտքի վճարումն իրականացնում է Համաձայնագրի թիվ 3 հավելվածում ներկայացված ժամանակացույցին համապատասխան:

3.2. Ստացողն իրավունք ունի կատարելու Ներդրումային վարկի գծով Հիմնական պարտքի գումարների ժամկետից շուտ վերադարձ՝ Ստանդարտ պայմանների 3.02 բաժնում շարադրված կարգով և պայմաններով:

3.3. Եթե Կառավարիչը ստանում է ավելի քիչ գումար, քան դրա ստանալու պահին Ստացողի կողմից վճարման ենթակա վարկի գծով Վճարի ամբողջ գումարը, ապա Կառավարիչը նշված գումարը հաշվում է վարկի գծով Վճարումների մարման հաշվին՝ Ստանդարտ պայմանների 3.03 բաժնով նախատեսված կարգին համապատասխան:

3.4. Վարկի գծով Վճարումների հաշվեգրման համար Կառավարչի թղթակցային հաշվի վավերապայմանները նշված են Համաձայնագրի 9-րդ հոդվածում կամ՝ դրանց փոփոխության դեպքում, Ստանդարտ պայմանների 3.04 բաժնին համապատասխան Ստացողին ուղարկված՝ Կառավարչի ծանուցման մեջ:

## ՀՈԴՎԱԾ 4.
## ՍՏԱՑՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ստացողը՝ գործադիր իշխանության իր մարմինների միջոցով պարտավորվում է ապահովել՝

ա) Ծրագրի իրականացումը՝ Համաձայնագրով և Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի պահանջներով, ինչպես նաև Համաձայնագրի թիվ 5 հավելվածում սահմանված կարգով և պայմաններով,

բ) Ծրագրի իրականացման ընթացքում Ստացողի կողմից Համաձայնագրի թիվ 2 հավելվածում նշված քաղաքականությունների և ընթացակարգերի կիրառելի պահանջների կատարումը, Կառավարչին ներկայացվող հաշվետվությունների, փաստաթղթերի և նյութերի կազմումն ու տրամադրումը, որոնք ենթակա են տրամադրման նշված քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան,

գ) Ծրագրի համաֆինանսավորումը Համաձայնագրի թիվ 4 հավելվածին համապատասխան, ինչպես նաև՝ ի լրումն վերը նշվածի՝ Ծրագրի համաֆինանսավորումը՝ ապահովելով՝

— Ներդրումային վարկի միջոցներից ֆինանսավորվող պայմանագրերի մասով հարկերի և այլ պարտադիր վճարների ու գործառնական ծախսերի գծով վճարումը.

— հողերի օտարման և վերաբնակեցման իրականացման ծախսերի վճարումը (այդ թվում՝ Հողերի օտարման և վերաբնակեցման պլանի իրականացման նկատմամբ արտաքին մոնիթորինգի անցկացման ծախսերի վճարումը).

— Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ծախսերի վճարումը.

դ) Տեխնիկական միջոցների, ծառայությունների և այլ ռեսուրսների տրամադրումը, որոնք պահանջվում են Ծրագրի արդյունավետ կատարումն ապահովելու համար՝ Ստանդարտ պայմանների 4.01 բաժնի «բ» կետին համապատասխան.

ե) Կառավարչին Ծրագրի փաստաթղթերի և դրանց հասանելիության տրամադրումը, հաշվառման փաստաթղթերի վարումը և պահպանումը՝ Ստանդարտ պայմանների 4.02 բաժնին համապատասխան.

զ) Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը, ինչպես նաև Համաձայնագրով նախատեսված՝ Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվությունների տրամադրումը՝ Ստանդարտ պայմանների 4.03 բաժնին և Համաձայնագրի թիվ 6 հավելվածին համապատասխան.

է) Ներդրումային վարկի միջոցների ֆինանսական կառավարումը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացումը և Կառավարչին տեղեկատվության տրամադրումը՝ Ստանդարտ պայմանների 4.04 բաժնի պահանջներին համապատասխան:

Ստանդարտ պայմանների 4.04 բաժնի «գ» կետում նշված հաշվետվությունները, փաստաթղթերը և աուդիտորների եզրակացությունները Կառավարչին են ներկայացվում նրա կողմից ընդունելի ձևով՝ ըստ պատրաստման, սակայն ցանկացած դեպքում ոչ ուշ, քան Ծրագրի իրականացման ժամկետի ընթացքում յուրաքանչյուր օրացուցային տարվա ավարտից 6 (վեց) ամիս հետո: Առաջին հաշվետվությունները (Ստանդարտ պայմանների 4.04 բաժնի «գ» կետում նշված հաշվետվությունները, փաստաթղթերը և աուդիտորների եզրակացությունները) պետք է Կառավարչին ներկայացվեն ոչ ուշ, քան օրացուցային այն տարվա ավարտից 6 (վեց) ամիս հետո, որի ընթացքում Համաձայնագրով նախատեսված Կառավարչի պարտավորություններն ուժի մեջ են մտել, իսկ վերջինները՝ ոչ ուշ, քան վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի օրվանից 6 (վեց) ամիս հետո: Նշված փաստաթղթերի՝ որևէ կոնկրետ ժամանակահատվածի համար տրամադրման այլ կարգ և ժամկետ կարող է Կառավարչի կողմից համաձայնեցվել Ստացողի հիմնավորված գրավոր դիմումի հիման վրա, որն Ստացողի կողմից Կառավարչին է ուղարկվել ոչ ուշ, քան դրանց տրամադրման սահմանված ժամկետը լրանալուց 2 (երկու) ամիս առաջ՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով.

ը) Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների իրականացումը ներդրումային վարկի միջոցների հաշվին՝ Համաձայնագրի թիվ 7 հավելվածում նշված գնումների ընթացակարգերին համապատասխան.

թ) Ծրագրի ֆինանսավորման համար հատկացված միջոցների ծախսումը Համաձայնագրի թիվ 8 հավելվածում նշված՝ միջոցների տրամադրման ընթացակարգերին համապատասխան.

ժ) Ստացողի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության՝ Ծրագրի իրականացման ամենօրյա աշխատանքների համար պատասխանատու կազմակերպության կամ այլ կազմակերպության (այսուհետ՝ **Ծրագրի իրականացման խումբ** կամ **ԾԻԽ**) ներգրավումը՝ Համաձայնագրի թիվ 5 հավելվածի 3-րդ կետում նշված գործառույթները կատարելու համար՝ այդ թվում՝ նշված գործառույթների կատարման համար ԾԻԽ-ում մասնագետների ներգրավումը (Կառավարչի հետ համաձայնեցմամբ), որոնց կոմպետենտության մակարդակը թույլ է տալիս արդյունավետորեն իրականացնել Ծրագիրը՝ Համաձայնագրի թիվ 2 հավելվածում նշված քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան, ԾԻԽ-ի գործունեությունը Ծրագրի իրականացման և վերջնական հաշվետվությունների ներկայացման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, ինչպես նաև վերապահված գործառույթների կատարման համար ԾԻԽ-ին անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը,

ժա) ԾԻԽ-ի ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ **ՏԿԵՆ**), նրանց հետ փոխկապակցված անձանց, աշխատողների, գործակալների կողմից հետևյալ պահանջների կատարումը՝

- պահպանել կոռուպցիայի հակազդման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, ինչպես նաև ապահովել տվյալ օրենսդրության կատարումն իրենց կողմից ներգրավվող Մատակարարների (առկայության դեպքում՝ ենթակապալառուների) կողմից.
- ձեռնպահ մնալ կոռուպցիայի հակազդման ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը խախտող, խախտմանը դրդող

կամ դրան նպաստող գործողություններ կատարելուց, չվճարել, չառաջարկել վճարել և թույլ չտալ որևէ դրամական միջոցի կամ արժեքի վճարումը, այլ նյութական կամ ոչ նյութական օգուտի ուղղակի կամ անուղղակի տրամադրումը ցանկացած անձի՝ որևէ առավելություն ստանալու կամ այլ ոչ իրավաչափ նպատակների հասնելու համար այդ անձանց գործողությունների կամ որոշումների վրա ազդելու նպատակով.

— եթե կասկածներ են առաջացել, որ տեղի է ունեցել կամ կարող է տեղի ունենալ Համաձայնագրի որևէ դրույթի խախտում՝ գրավոր ծանուցել Կառավարչին՝ նշելով հաստատող արժանահավատ փաստեր և նյութեր.

— երաշխավորել սույն Համաձայնագրի կատարման շրջանակներում ներկայացված՝ հակակոռուպցիոն պայմանների խախտման վերաբերյալ ծանուցումների պատշաճ քննության իրականացումը՝ պահպանելով գաղտնիության սկզբունքը, և հնարավոր կոնֆլիկտային իրավիճակների կանխմանը և վերացմանն ուղղված արդյունավետ միջոցների կիրառումը.

— ապահովել, որ սույն Համաձայնագրի շրջանակներում ստացված միջոցները չեն օգտագործվելու այնպիսի գործառնություններ իրականացնելու, գործարքներ կատարելու համար, որոնք արգելված են ցանկացած օրենքով, հրամանագրով, որոշմամբ, բանաձևով, կանոնակարգով, վճռով, ցուցմամբ և իրավունքի այլ նորմերով, ինչպես նաև դատական վճիռներով, որոնք ընդունվել կամ սահմանվել են Միավորված ազգերի կազմակերպության, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպական միության, Մեծ Բրիտանիայի, ԵԱԶԲ/ԿԶԵՀ մասնակից պետության կամ այլ պետության օրենսդիր, գործադիր, դատական կամ այլ լիազոր մարմնի կամ գերատեսչության կողմից, եթե այդ պետության օրենսդրությունը հարկավոր է հաշվի առնել համապատասխան գործառնության կամ գործարքի կատարման ժամանակ:

4.2. Ստացողի և Կառավարչի միջև փոխգործակցությունն իրականացվում է Ստանդարտ պայմանների 4.05 և 4.06 բաժիններին համապատասխան:

4.3. Ստացողը, գրավոր հարցման հիման վրա, Կառավարչին տեղեկատվություն է տրամադրում իր տարածքում ֆինանսական և տնտեսական պայմանների վերաբերյալ, որի համար Կառավարիչը հիմնավորված հարցում է ներկայացրել՝ հաշվի առնելով Ստանդարտ պայմանների 5.01 բաժինը:

4.4. Ստացողը պարտավորվում է ապահովել, որ իր որևէ արտաքին պարտք առաջնահերթություն չունենա Ներդրումային վարկի գծով պարտքի նկատմամբ՝ Ստանդարտ պայմանների 6.01 բաժնի դրույթներին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 5. ՍՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

5.1. Ներդրումային վարկի միջոցներն օգտագործելու Ստացողի իրավունքը կասեցնելը, չեղարկելը, վարկի գծով Հիմնական պարտքը և այլ Վճարումները վաղաժամկետ մարելու մասին պահանջ ներկայացնելը Կառավարչի կողմից իրականացվում են Ստանդարտ պայմանների VII հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով՝ հաշվի առնելով հետևյալ լրացումները՝

Ստանդարտ պայմանների 7.02 բաժնի «ժա» կետին, 7.03 բաժնի «զ» կետին և 7.05 բաժնի «բ» կետին համապատասխան՝ դրանցում նշված իրավական հետևանքների կիրառման համար սահմանվում է հետևյալ լրացուցիչ հիմքը.

Համաձայնագրի 4.1 կետի «ժ» ենթակետում նշված ԾԻԽ-ի գործառույթներն ու լիազորությունները փոփոխվել, կասեցվել կամ չեղարկվել են, կամ Ծրագրի իրականացման խմբի գործունեության վրա այլ ազդեցություն է գործադրվել այնպես, որ դա էականորեն և բացասաբար է ազդել Ստացողի՝ Համաձայնագրով սահմանված պայմաններով Ծրագրի իրականացման կարողության վրա:

5.2. Ստանդարտ պայմանների 7.06 բաժնով նախատեսված՝ Վարկի գծով վճարումների մարումն ուշացնելու համար տուժանքի չափը կազմում է ժամկետանց պարտավորության ամբողջ գումարի 0,01% (Զրո ամբողջ մեկ հարյուրերորդական տոկոսը) ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

## ՀՈԴՎԱԾ 6. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

6.1 Համաձայնագրի հետ կապված վեճերի կարգավորումն իրականացվում է Ստանդարտ պայմանների 8.03 բաժնին համապատասխան՝ հաշվի առնելով Կառավարչի հնարավորությունների և իրավունքների մասին ընդհանուր դրույթները՝ Ստանդարտ պայմանների 8.01 և 8.02 բաժիններով սահմանված պարտավորությունները կատարելուն

Ստացողին հարկադրելու մասով՝ բացառությամբ Ստանդարտ պայմանների 8.01 բաժնի «գ» կետի:

## ՀՈԴՎԱԾ 7. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

7.1. Համաձայնագրի մասով Կառավարչի պարտավորություններն ուժի մեջ են մտնում այն օրը (այսուհետ՝ **Ուժի մեջ մտնելու ամսաթիվ**), երբ Կառավարիչը Ստացողին ուղարկում է ծանուցում այն մասին, որ ինքն ընդունել է իրեն բավարարող ապացույցները Ստացողի՝ ի դեմս ՏԿԵՆ-ի (կամ նրա իրավահաջորդի) կողմից հետևյալ պայմանները կատարելու վերաբերյալ՝

ա) Համաձայնագիրը ստորագրված է Ստացողի անունից՝ Ստացողի օրենսդրությանը համապատասխան պատշաճ կերպով ձևակերպված լիազորություններ ունեցող անձի կողմից.

բ) Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի կողմից՝ իր օրենսդրությամբ սահմանված կարգով.

գ) Համաձայնագրի թիվ 5 հավելվածի 3-րդ կետում նշված՝ Ծրագրի իրականացման գործառույթները վերապահված են Ծրագրի իրականացման խմբին՝ Ստացողի օրենսդրությանը համապատասխան, ինչպես դա նախատեսված է Համաձայնագրի 4.1 բաժնի «ժ» ենթակետով.

դ) Ստացողն ապահովել է Ծրագրի գնումների պլանի (այսուհետ՝ **Գնումների պլան**) պատրաստումը, Կառավարչի հետ համաձայնեցումը և հաստատումը՝ ԿԶԵՀ գնումների ընթացակարգերի պահանջներին համապատասխան.

ե) Ստացողն ապահովել է Ծրագրի բյուջեի (այսուհետ՝ **Բյուջե**) պատրաստումը, Կառավարչի հետ համաձայնեցումը և հաստատումը՝ ԿԶԵՀ գնումների ընթացակարգերի պահանջներին համապատասխան.

զ) Ստացողը պատրաստել, Կառավարչի հետ համաձայնեցրել և հաստատել է ձևով և բովանդակությամբ Կառավարչին բավարարող՝ Ծրագրի իրականացման ուղեցույցը՝ Ծրագրի իրականացման հարցերով Ստացողի լիազորված մարմինների, կազմակերպությունների և կառույցների փոխգործակցության ընթացակարգերի նկարագրությամբ՝ ներառյալ Ծրագրի վարչական և ֆինանսական կառավարումը,

գնումների կառավարումը, հաշվառման վարումը, Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը, Համաձայնագրի թիվ 2 հավելվածին համապատասխան՝ Համաձայնագրի նկատմամբ կիրառելի քաղաքականությունների և ընթացակարգերի պահանջների կատարման վերահսկողությունը, Համաձայնագրի մասով հաշվետվությունների կազմումն ու տրամադրումը (այն հաշվետվությունների ձևերով, որոնց կազմումը նախատեսված է Համաձայնագրով) (այսուհետ՝ **Ծրագրի իրականացման ուղեցույց**):

է) Ստացողը կազմավորել է Համաձայնագրի 4.1 կետի «ժ» ենթակետում նշված ԾԻԽ-ը:

Եթե Կառավարչի կողմից հետաձգվել է ուժի մեջ մտնելու մասին ծանուցման ուղարկումը Ստանդարտ պայմանների 9.02 բաժնի «բ» կետի դրույթներին համապատասխան, ապա Կառավարիչն այդ մասին ծանուցում է Ստացողին՝ նշելով Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար խոչընդոտ հանդիսացող իրադարձությունները:

7.2. Որպես ուժի մեջ մտնելու պայմանների կատարման հաստատում՝ Կառավարչին պետք է տրամադրվի Ստացողի Արդարադատության նախարարության եզրակացությունը (իրավաբանական եզրակացություն), որով հավաստվում է, որ ստորագրված Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի կողմից և նրա համար իրավապարտադիր է՝ այդ Համաձայնագրի պայմաններին, միջազգային իրավունքի նորմերին և Ստացողի ներպետական օրենսդրությանը համապատասխան:

7.3. Ուժի մեջ մտնելու բոլոր նախատեսված պայմանները՝ ներառյալ Կառավարչի կողմից իրավաբանական եզրակացությունն ստանալը, Ստացողի կողմից կատարվում են ոչ ուշ, քան Կողմերի կողմից Համաձայնագիրն ստորագրելու օրվանից 180-օրյա (հարյուրութսունօրյա) ժամկետում (այսուհետ՝ **Ուժի մեջ մտնելու առավելագույն ժամկետ**): Նշված ժամկետը չպահպանելը հանգեցնում է Ստանդարտ պայմանների 9.03 Բաժնով նախատեսված հետևանքներին:

7.4. Համաձայնագրի և Կողմերի՝ Համաձայնագրով նախատեսված բոլոր պարտավորությունների գործողությունը դադարում է Ստանդարտ պայմանների 9.04 Բաժնի դրույթներին համապատասխան:

## ՀՈԴՎԱԾ 8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Կողմերի կողմից Համաձայնագրին առնչվող ծանուցումների կամ հարցումների ուղարկումն իրականացվում է Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի դրույթներին համապատասխան:

Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի նպատակներով նշվում են Կողմերի հետևյալ հասցեները՝

| Կառավարիչ՝ | Ստացող՝ |
| --- | --- |
| Եվրասիական զարգացման բանկ՝<br>Ղազախստանի Հանրապետություն,<br>050051, քաղ. Ալմաթի,<br>Դոստիկ պող., 220 | Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն<br>Հայաստանի Հանրապետություն,<br>0010, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան 1 |

8.2. Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան՝ Համաձայնագրի նպատակներով Ստացողի լիազորված ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարն է և նրա կողմից Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան լիազորված անձը (անձինք):

Ստացողի անունից Ստանդարտ պայմանների 10.02 բաժնի «բ» կետով նախատեսված գործողությունների կատարման լիազորություններն Ստացողի կողմից ձևակերպվում են առանձին գրավոր փաստաթղթերով՝ Ստացողի օրենսդրությանը համապատասխան: Ստացողը լիազորությունների հաստատումները տրամադրում է Կառավարչին՝ Ստանդարտ պայմանների 10.03 բաժնին համապատասխան:

8.3. Համաձայնագրի փոփոխությունները և լրացումները ձևակերպվում և ուժի մեջ են մտնում Ստանդարտ պայմանների 10.04 բաժնով նախատեսված կարգով:

8.4. Համաձայնագրի բոլոր հավելվածները դրա անբաժանելի մասն են կազմում և բաղկացած են հետևյալից՝

1) **Հավելված թիվ 1**՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից մասնակից պետությանը ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմաններ.
2) **Հավելված թիվ 2**՝ Ներդրումային վարկի տրամադրման պայմանները.
3) **Հավելված թիվ 3՝** Հիմնական պարտքի մարման ժամանակացույց.
4) **Հավելված թիվ 4**՝ Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և ծախսային կատեգորիաները.
5) **Հավելված թիվ 5**՝ Ծրագրի նկարագրությունը և իրագործման կարգը.
6) **Հավելված թիվ 6**՝ Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը.
7) **Հավելված թիվ 7**՝ Գնումների ընթացակարգեր.
8) **Հավելված թիվ 8**՝ Միջոցների հատկացման ընթացակարգեր:

## ՀՈԴՎԱԾ 9. ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԱՇՎԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հիմնադրամի միջոցների հետ գործառույթներ կատարելու համար Կառավարչի կողմից բացված հաշվի վավերապայմանները՝

Eurasian Development Bank

(Eurasian Fund for Stabilization and Development)

Almaty, Kazakhstan, SWIFT: EABRKZKAACF

Correspondent account № 890-1003-441

with The Bank of New York Mellon, New York, USA

SWIFT: IRVTUS3N

Payment details: In favor of account № KZ147000000221100001 of

Eurasian Fund for Stabilization and Development

Համաձայնագիրն ստորագրվել է 2024 թվականի հուլիսի 26-ին, ռուսերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ՝ Կառավարչի և Ստացողի համար:

| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
|---|---|
| ________________ | ______________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |

**<u>Հավելված թիվ 1</u>**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

**Հաստատված է**
**Եվրասիական զարգացման բանկի վարչության կողմից**
**(2015 թվականի հուլիսի 22-ի թիվ 24/ԿԶԵՀ արձանագրություն)**

**Ստանդարտ պայմաններ**
**Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից մասնակից պետությանը ներդրումային վարկի տրամադրման համաձայնագրերի**

**Բովանդակություն**

**ՀՈԴՎԱԾ 1. Ընդհանուր դրույթներ**
ԲԱԺԻՆ 1.01. Ստանդարտ պայմանների կիրառումը
ԲԱԺԻՆ 1.02. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի դրույթների գերակայությունը Ստանդարտ պայմաննների նկատմամբ
ԲԱԺԻՆ 1.03. Եզրույթներ և Սահմանումներ
ԲԱԺԻՆ 1.04. Հղումներ և վերնագրեր

**ՀՈԴՎԱԾ II. Ներդրումային վարկի միջոցների տրամադրումը**
ԲԱԺԻՆ 2.01. Ներդրումային վարկի միջոցների տրամադրումը. միջոցների տրամադրման հայտեր

ԲԱԺԻՆ 2.02. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի թույլատրելի ծախսերը
ԲԱԺԻՆ 2.03. Ներդրումային վարկի միջոցների օգտագործումը հարկերի ֆինանսավորման համար
ԲԱԺԻՆ 2.04. Ներդրումային վարկի միջոցների վերաբաշխումը ծախսերի տեսակների միջև
ԲԱԺԻՆ 2.05. Ներդրումային վարկի միջոցների տրամադրման արժույթը
ԲԱԺԻՆ 2.06. Հաշվառման վարում
ԲԱԺԻՆ 2.07. Արժույթների արժեքի գնահատում

**ՀՈԴՎԱԾ III. Ներդրումային վարկի սպասարկումը և մարումը**
ԲԱԺԻՆ 3.01. Վարկի վճարումներ
ԲԱԺԻՆ 3.02. Հիմնական պարտքի վաղաժամկետ մարում
ԲԱԺԻՆ 3.03. Վարկի մասնակի վճարում
ԲԱԺԻՆ 3.04. Վարկի վճարումների կատարման ժամկետները
ԲԱԺԻՆ 3.05. Վարկի վճարման արժույթը
ԲԱԺԻՆ 3.06. Վարկի վճարման եղանակը

**ՀՈԴՎԱԾ IV. Նախագծի իրականացումը**
ԲԱԺԻՆ 4.01. Նախագծի իրականացումը
ԲԱԺԻՆ 4.02. Պլաններ, փաստաթղթեր, հաշվառում
ԲԱԺԻՆ 4.03. Նախագծի մոնիթորինգ և գնահատում
ԲԱԺԻՆ 4.04. Ֆինանսական կառավարում: Ֆինանսական հաշվետվություն: Աուդիտ
ԲԱԺԻՆ 4.05. Կառավարչի և Ստացողի փոխգործակցությունը
ԲԱԺԻՆ 4.06. Նախագծի վերահսկումը Ստացողի տարածքում

**ՀՈԴՎԱԾ V. Տեղեկատվության տրամադրումը**
ԲԱԺԻՆ 5.01. Ֆինանսական և տնտեսական տվյալներ

**ՀՈԴՎԱԾ VI. Ներդրումային վարկի ապահովումը**
ԲԱԺԻՆ 6.01. Ներդրումային վարկի ապահովումը

**ՀՈԴՎԱԾ VII. Չեղարկումը: Կասեցումը: Վաղաժամկետ մարման պահանջը**
ԲԱԺԻՆ 7.01. Ստացողի կողմից Ներդրումային վարկի գումարների չեղարկումը
ԲԱԺԻՆ 7.02.Ներդրումային վարկի միջոցների տրամադրման վերաբերյալ Ստացողի իրավունքի կասեցումը
ԲԱԺԻՆ 7.03. Ներդրումային վարկի միջոցների տրամադրման վերաբերյալ Ստացողի իրավունքի չեղարկումը

ԲԱԺԻՆ 7.04. Հիմնական պարտքի մարման ժամանակացույցի փոփոխում չեղարկման դեպքում
ԲԱԺԻՆ 7.05. Ներդրումային վարկի Հիմնական պարտքի վաղաժամկետ մարման պահանջի ներկայացումը
ԲԱԺԻՆ 7.06. Տուժանք վարկի Վճարումների մարման կետանցի համար
ԲԱԺԻՆ 7.07. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի գործողությունը չեղարկումից, կասեցումից կամ վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնելուց հետո

**ՀՈԴՎԱԾ VIII. Պարտավորությունների հարկադիր կատարում: Արբիտրաժ**

ԲԱԺԻՆ 8.01. Պարտավորությունների հարկադիր կատարման հնարավորություն
ԲԱԺԻՆ 8.02. Իրավունքների իրականացման հետաձգում
ԲԱԺԻՆ 8.03. Արբիտրաժ

**ՀՈԴՎԱԾ IX. Ուժի մեջ մտնելը: Գործողության դադարեցումը**

ԲԱԺԻՆ 9.01. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պայմանները
ԲԱԺԻՆ 9.02. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը
ԲԱԺԻՆ 9.03. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումը ուժի մեջ չմտնելու պատճառով
ԲԱԺԻՆ 9.04. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումը

**ՀՈԴՎԱԾ X. Այլ դրույթներ**

ԲԱԺԻՆ 10.01. Ծանուցումներ և հարցումներ
ԲԱԺԻՆ 10.02. Գործողություններ Ստացողի անունից
ԲԱԺԻՆ 10.03. Ստացողի ներկայացուցչի իրավասությունների հաստատում
ԲԱԺԻՆ 10.04. Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ձևակերպումը

## ՀՈԴՎԱԾ I. Ընդհանուր դրույթներ

**ԲԱԺԻՆ 1.01.** *Ստանդարտ պայմանների կիրառումը*

Սույն «Եվրասիական տնտեսական ընկերակցության Հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից մասնակից պետությանը ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրերի ստանդարտ պայմանները» (այսուհետ՝ Ստանդարտ պայմաններ) հաստատված են Կառավարչի կողմից Հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1(ժ) կետի համաձայն և հանդիսանում են Հիմնադրամի պաշտոնական փաստաթուղթ՝ Հիմնադրամի Կանոնակարգի 2-րդ հոդվածի համաձայն:

Սույն Ստանդարտ պայմանները կիրառվում են Ներդրումային վարկի տրամադրման մասին կոնկրետ Համաձայնագրի նկատմամբ սույն Համաձայնագրով նախատեսված ծավալով: Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում կարգավորիչ դրույթների բացակայության դեպքում գործում են Ստանդարտ պայմանների կիրառելի դրույթները այն մասով, որոնք չեն հակասում այդ համաձայնագրին:

**ԲԱԺԻՆ 1.02.** *Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի դրույթների գերակայությունը Ստանդարտ պայմանների նկատմամբ*

Եթե Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի կամ դրան կից հավելվածների որևէ դրույթ չի համապատասխանում Ստանդարտ պայմանների որևէ դրույթի, կիրառվում են Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի կամ համապատասխան հավելվածի դրույթները:

**ԲԱԺԻՆ 1.03.** *Եզրույթներ և Սահմանումներ*

Եթե Ներդրումային վարկի տրամադրման մասին կոնկրետ Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, ապա Ստանդարտ պայմաններում և Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրերում կիրառվող եզրույթները և սահմանումները նշանակում են հետևյալը՝

ա) **Ակտիվներ** – ցանկացած գույք, ֆինանսական միջոցներ, եկամուտներ և պահանջի իրավունքներ

բ) **Վարկի արժույթ** – արժույթ (ԱՄՆ դոլար և/կամ եվրո), որով արտահայտված է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված Ներդրումային վարկը: Եթե Ներդրումային վարկը արտահայտված է մեկից ավելի արժույթով, ապա Արժույթ եզրույթը վերաբերում է այդ արժույթներից յուրաքանչյուրին:

գ) **Արտաքին պարտք** – Ստացողի ցանկացած պարտք, որը ենթակա է կամ կարող է ենթակա լինել վճարման ցանկացած արժույթով ցանկացած այլ պետությանը կամ ՄՖԿ:

դ) **Պետական ակտիվներ** – Ստացողի, նրա ցանկացած սուբյեկտի, քաղաքական կամ վարչական մարմինների և այլ կազմակերպությունների ակտիվները, որոնք նշված են Ստանդարտ պայմանների 5.01 Բաժնի բ) կետում, ներառյալ Ստացողի կենտրոնական (ազգային) բանկի կամ արժութային կայունացնող հիմնադրամի գործառույթները կամ նմանատիպ գործառույթներ իրականացնող ցանկացած հիմնարկությունում գտնվող ոսկու և արժութային պահուստները:

ե) **Ուժի մեջ մտնելու ամսաթիվ** – ամսաթիվ, որի վրա հասնելուն պես Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիրը մտնում է ուժի մեջ՝ համաձայն Ստանդարտ պայմանների 9.02 Բաժնի (ա) կետի:

զ) **Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվ** - Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված ամսաթիվ կամ այլ ավելի ուշ ամսաթիվ, որը Կառավարիչը կարող է սահմանել Ստացողի դիմումի և Հիմնադրամի Խորհրդի որոշման հիման վրա՝ Ստացողին ուղարկելով համապատասխան ծանուցում՝ համաձայն Ստանդարտ պայմանների 10.01 Բաժնի, որից հետո Ներդրումային վարկի միջոցներ ստանալու Ստացողի իրավունքը դադարում է: Կառավարչի ծանուցման հիման վրա Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվի փոփոխությունը չի պահանջում Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ Ստանդարտ պայմանների 10.04 Բաժնով նախատեսված կարգով:

է) **Վճարման ամսաթիվը** - Ստանդարտ պայմանների 3.01 Բաժնում հիշատակված, վարկի Վճարումների կատարման ցանկացած ամսաթիվ, որը նշված է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում:

ը) **Հիմնական պարտքի մարման ամսաթիվ** - յուրաքանչյուր Վճարման ամսաթիվ, որի վրա հասնելուն պես ենթակա են վճարման Ներդրումային վարկի Հիմնական պարտքի ամբողջ գումարը կամ գումարի մասը:

թ) **Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագիր** - Եվրասիական տնտեսական ընկերակցության Հակաճգնաժամային հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագիր, ստորագրված 2009թ. հունիսի 9-ին ք. Մոսկվայում Հիմնադրամի հիմնադիր պետությունների՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետութան, Ռուսաստանի Դաշնության Տաջիկստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կողմից:

ժ) **Ներդրումային վարկ** - Հիմնադրամի միջոցներից ժամկետային, վճարովի և վերադարձման հիմունքներով Ստացողին տրամադրված վարկ՝

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի հիման վրա՝ նման Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով:

ժա) **Վերջնական Ստացող**՝ Ստացողի տարածքում Նախագիծը իրականացնող իրավաբանական անձ (նախագծող ընկերություն), որի քաղաքացիական իրավունակությունը սահմանվում է այն պետության օրենսդրությամբ, որտեղ այն հիմնադրվել է, և որի հետ Ստացողը կնքել է Ներդրումային վարկի հաշվին ֆինանսավորում տրամադրելու մասին համաձայնագիր Ստացողի տարածքում Նախագծի իրականացմանը աջակցելու նպատակով:

ժբ) **ԼԻԲՈՐ** - Լոնդոնյան միջբանկային առաջարկի դրույքաչափ (London Inter Bank Offer Rate), որը սահմանվում է Բրիտանական բանկային ասոցիացիայի (British Bankers's Association) կողմից վեցամյա ավանդների համար, Վարկի արժույթով՝ արտահայտված տարեկան տոկոսներով, ըստ Reuters screnn համապատասխան էջի տվյալների, Լոնդոնում T ամսաթվից 2 աշխատանքային օր առաջ ընկնող օրվա առավոտյան ժամը 11:00 դրությամբ, որտեղ T-ն միջոցների տրամադրման մասին Համաձայնագրով սահմանված տոկոսների հաշվարկման ժամանակահատվածի առաջին օրն է: Այն դեպքում, եթե Reuters-ի համապատասխան էջը փոխարինված է կամ անհասանելի է, ապա Հիմնադրամի միջոցների կառավարիչը իրավասու է սահմանելու այլ էջ կամ աղբյուր, որտեղ սահմանված կլինի ԼԻԲՈՐ-ի դրույքաչափը:

ժգ) **ՄՖԿ** - նշանակում է միջազգային ֆինանսական կազմակերպություններ, որոնք ստեղծվել են միջազգային իրավունքին համապատասխան՝ միջպետական կամ միջկառավարական համաձայնագրերի հիման վրա, և օժտված են միջազգային իրավունակությամբ:

ժդ) **Հիմնադրամի մասին կանոնակարգ** - Եվրասիական տնտեսական ընկերակցության Հակաճգնաժամային հիմնադրամի մասին կանոնակարգ, որը հանդիսանում է Հիմնադրամի ստեղծման մասին Պայմանագրի անբաժանելի մասը:

ժե) **Ստացող** - Հիմնադրամի մասնակից պետություն, որը հանդիսանում է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի կողմ, որին տրամադրվում են Ներդրումային վարկի միջոցները:

ժզ) **Պահման իրավունք** - հիփոթեք, գրավ, ինչպես նաև այլ ցանկացած տեսակի սահմանափակումներ, արտոնություններ և առավելություններ Ստացողի Պետական ակտիվների նկատմամբ:

ժէ) **Նախագիծ** - ենթակառուցվածքների նոր օբյեկտների և արտադրությունների ստեղծման, ընդարձակման և/կամ վերանորոգման համար ներդրումներ նախատեսող, սահմանված ժամանակահատվածում իրականացվող, փոխկապակցված միջոցառումների համալիր:

ժը) **Տոկոսային ժամանակահատված** - տոկոսների հաշվեգրման ժամանակահատված, ընդ որում առաջին տոկոսային ժամանակահատվածը

սկսվում է Ներդրումային վարկի կամ դրա մի մասի տրամադրման ամսաթվից՝ ներառելով այդ օրը, և ավարտվում է առաջիկա Վճարման ամսաթվին՝ չներառելով այդ օրը: Հետագա Տոկոսային ժամանակահատվածները սկսվում են նախորդ Տոկոսային ժամանակահատվածի համար Վճարման ամսաթվին, ներառելով այն և ավարտվում են հաջորդ Վճարման ամսաթվին, չներառելով այն: Վերջին Տոկոսային ժամանակահատվածը ավարտվում է Ներդրումային վարկի օգտագործման ժամկետի ավարտին՝ չներառելով այդ օրը:

ժթ) **Աշխատանքային օր** - Ստացողի կողմից Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված վճարումների իրականացման դեպքերի համար նշանակում է աշխատանքային օր՝ Ստացողի, Ղազախստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների և/կամ Եվրոպայի օրենսդրության համապատասխան, երբ տվյալ երկրներում առևտրային բանկերը բաց են բանկային գործառույթների համար (բացի հանգստյան օրերի և տվյալ պետությունների օրենսդրությամբ սահմանված պաշտոնական ոչ աշխատանքային օրերի):

ի) **Հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագիր** - Համաձայնագիր Եվրասիական տնտեսական ընկերակցության Հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարման մասին՝ ստորագրված Կառավարչի և Հիմնադրամի հիմնադիրների/մասնակիցների միջև՝ համաձայն Հիմնադրամի հիմնադրման մասին պայմանագրի և Հիմնադրամի մասին կանոնակարգի:

իա) **Համաձայնագիր Կառավարչի հիմնադրման մասին** - Համաձայնագիր Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև, առ 12 հունվարի 2006թ., ստորագրված ք. Աստանայում:

իբ) **Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիր** - համաձայնագիր Հիմնադրամի մասնակցի անունից և նրա հանձնարարությամբ գործող Կառավարչի և Ստացողի միջև, որի առարկան հանդիսանում է Հիմնադրամի միջոցներից Նեդրումային վարկի տրամադրումը: Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիրը ներառում է բոլոր ուղղումները (փոփոխությունները), որոնք կատարված են նման համաձայնագրում սահմանված կարգով, ինչպես նաև դրան կից բոլոր հավելվածները և փաստաթղթերը, հղումները, որոնք պարունակվում են նման համաձայնագրի տեքստում:

իգ) **Հիմնադրամի մասնակից** - Հիմադրամի հիմնադրման մասին Պայմանագրի և Հիմնադրամի մասին Կանոնակարգի համաձայն Հիմնադրամի մասնակից հանդիսացող պետություններ և կազմակերպություններ:

իդ) **Կառավարիչ** - Եվրասիական զարգացման բանկ, որը հանդիսանում է Միջազգային կազմակերպություն՝ ստեղծված Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին համաձայնագրի համաձայն և գործում է որպես Հիմնադրամի միջոցների Կառավարիչ համաձայն Հիմնադրամի միջոցների

կառավարման մասին Համաձայնագրի, կամ Հիմնադրամի մասնակիցների կողմից որոշված այլ կազմակերպություն՝ Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրի և Հիմնադրամի մասին Կանոնակարգի համաձայն:

իե) **Հիմնադրամ** - Եվրասիական տնտեսական ընկերակցության Հակաճգնաժամային հիմնադրամ՝ ստեղծված Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրի հիման վրա՝ որպես Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրով սահմանված նպատակներով ֆինանսական ռեսուրսների ներգրավման, կուտակման և օգտագործման գործիք:

Ստանդարտ պայմաններում օգտագործվող բոլոր այլ եզրույթները և սահմանումները ունեն նույն նշանակությունը, ինչը որ սահմանված է Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրում, Հիմնադրամի մասին Կանոնակարգում և Հիմնադրամի միջոցներից ներդրումային ֆինանսավորման տրամադրման Կարգում, հաստատված Հիմնադրամի Խորհրդի կողմից:

Որոշ եզրույթների նշանակությունը սահմանվում է Ստանդարտ պայմանների համատեքստում:

**ԲԱԺԻՆ 1.04** *Հղումներ և վերնագրեր*

Ստանդարտ պայմաններում առկա հղումները Հոդվածներին, Բաժիններին և կետերին հանդիսանում են Ստանդարտ պայմանների հղումները Հոդվածներին, Բաժիններին և կետերին: Հոդվածների և Բաժինների վերնագրերը, ինչպես նաև Բովանդակությունը ներառված են Ստանդարտ պայմաններում տեղեկատվական նպատակներով և հաշվի չեն առնվում Ստանդարտ պայմանների մեկնաբանման դեպքում:

## ՀՈԴՎԱԾ II. Ներդրումային վարկի միջոցների տրամադրումը

**ԲԱԺԻՆ 2.01.** *Ներդրումային վարկի միջոցների տրամադրումը: Միջոցների տրամադրման հայտերը*

ա) Ներդրումային վարկի միջոցների տրամադրումը իրականացվում է Կառավարչի կողմից՝ Ստացողի կողմից Կառավարչին ներկայացվող Ստացողի հայտի հիման վրա, որը պարունակում է հետևյալ փաստաթղթերը (այսուհետ՝ Միջոցների տրամադրման հայտ)՝

- Ստացողի գրավոր հայտը՝ կազմված Կառավարչի կողմից հաստատված ձևով,

- Ստացողի անունից Միջոցների տրամադրման հայտը ստորագրելու իրավասություն ունեցող անձի կամ անձանց իրավասությունների վերաբերյալ Կառավարչի համար բավարար ապացույցներ, ինչպես նաև յուրաքանչյուր նման անձի ստորագրության հաստատված նմուշը,

- այլ փաստաթղթեր, որոնք հաստատում են Միջոցների տրամադրման հայտի հիմնավորվածությունը, որոնք կարող են հիմնավորված ձևով պահանջվել Կառավարչի կողմից  ինչպես տվյալ Հայտով միջոցների տրամադրումից առաջ, այնպես էլ հետո:

Միջոցների տրամադրման հայտը կազմվում և Ստացողի անունից ստորագրվում է Ստացողի լիազորված անձի կողմից:

Միջոցների տրամադրումն իրականացվում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ ժամկետ սահմանված չէ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով, Բանկին բավարարող Միջոցների տրամադրման հայտ ստանալուց հետո՝ Համաձայնագրով նախատեսված բոլոր նախնական պայմանները կատարելու դեպքում:

բ) սույն բաժնի ա) կետում նշված յուրաքանչյուր փաստաթղթի ձևը և բովանդակությունը պետք է բավարար լինի այն բանի համար, որ Կառավարիչը համոզվի, որ՝

- Ստացողն իրավունք ունի ստանալ Միջոցների տրամադրման հայտում իր կողմից նշված գումարը,

- Միջոցների տրամադրման հայտում նշված գումարը Ստացողի կողմից կօգտագործվի միայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված նպատակներով:

գ) Կառավարիչը Ներդրումային վարկի գումարները տրամադրում է Միջոցների տրամադրման հայտի հիման վրա՝ Կառավարչի կողմից սահմանված միջոցների օգտագործման ընթացակարգերին համապատասխան:

**ԲԱԺԻՆ 2.02** *Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ընդունելի ծախսերը*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի հիման վրա տրամադրված Ներդրումային վարկի միջոցները Ստացողն օգտագործում է միայն Ընդունելի ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի նպատակների համար ընդունելի ծախսեր են համարվում, եթե նշված համաձայնագիրը այլ բան չի նախատեսում, Ստացողին միջոցների տրամադրումը վճարումների կատարման նպատակով, որոնք բավարարում են միաժամանակ հետևյալ պահանջներին՝

- վճարումը նախատեսված է Նախագծի համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքերի կամ ծառայությունների հիմնավորված արժեքի վճարման համար, որոնք գնվում են Ներդրումային վարկի տրամադրման մասին համապատասխան Համաձայնագրում նշված գնումների կանոնների և

Համաձայնագրի այլ պայմանների համաձայն և ենթական են ֆինանսավորման Ներդրումային վարկի միջոցներից,

- վճարումը արգելված չէ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի կողմից ՄԱԿ-ի Կանոնադրության VII Գլխի դրույթներին համապատասխան ընդունված որոշմամբ կամ Եվրասիական տնտեսական ընկերակցության իրավասու մարմինների որոշմամբ,

- վճարումը չի խախտում միջազգային իրավունքի և այն պետության ազգային օրենդրության նորմերը, որի տարածքում իրականացվում է վճարումը,

- վճարումն իրականացված է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված ժամկետից ոչ շուտ և Կառավարչի հետ այլ պայմանավորվածությունների բացակայության դեպքում, նախատեսված է մինչև վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը կատարված ծախսերի վճարման համար:

**ԲԱԺԻՆ 2.03.** *Ներդրումային վարկի միջոցների օգտագործումը հարկերի ֆինանսավորման համար*

Եթե դա թույլատրված է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով, Ներդրումային վարկի միջոցների օգտագործումը պարտադիր հավաքների վճարման համար, ներառյալ հարկային և մաքսային վճարները, տուրքերը, միջնորդավճարները և այլն, որոնք գանձվում են պետության կողմից կամ դրա տարածքում Ընդունելի ծախսերից կամ դրանց կապակցությամբ, կամ որոնք սահմանված են դրանց ներմուծման, արտադրության, գնման կամ մատակարարման համար (այսուհետ՝ Հարկերը), իրականացվում են՝ պահպանելով Ներդրումային վարկի միջոցների տնտեսող և արդյունավետ օգտագործման սկզբունքները:

Եթե Կառավարիչը երբևիցե կիամարի, որ ցանկացած նման Հարկի գումարը չափազանց մեծ է կամ, որ նման Հարկը խտրական է կամ հիմնավորված չէ, Կառավարիչը, Ստանդարտ պայմանների 10.01 Բաժնի համաձայն, ծանուցելով Ստացողին, կարող է ուղղել Ներդրումային վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա Ընդունելի ծախսերի տոկոսը, որը նշված է ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում, որպեսզի ապահովի Ներդրումային վարկի միջոցների տնտեսող և արդյունավետ օգտագործման սկզբունքներին համապատասխանությունը: Նման ուղղումն ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցման պահից և չի պահանջում Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ Ստանդարտ պայմանների 10.04 Բաժնով նախատեսված կարգով:

**ԲԱԺԻՆ 2.04.** *Ներդրումային վարկի միջոցների վերաբաշխումը ծախսերի տեսակների միջև*

Եթե Կառավարիչը ցանկացած ժամանակ հիմնավոր կերպով կհամարի, որ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար տրամադրված Ներդրումային վարկի գումարը Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված ծախսերի ֆինանսավորման որևէ տեսակի համար անբավարար է, ապա Կառավարիչը, ծանուցելով Ստացողին, իրավունք ունի՝

ա) այլ տեսակից վերաբաշխել նշված տեսակի մեջ Ներդրումային վարկի գումարն այն չափով, որն անհրաժեշտ է սպասվող պակասը լրացնելու համար, եթե Կառավարչի կարծիքով Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով այդ այլ տեսակի համար տրամադրված միջոցների ծավալը գերազանցում է անհրաժեշտ ծավալը այն նպատակների կատարման համար, որոնց համար դրանք տրամադրված են,

բ) եթե սույն բաժնի (ա) կետում նշված վերաբաշխումը չի կարող ամբողջությամբ լրացնել սպասվող միջոցների պակասը, ապա Կառավարիչն իրավունք ունի կրճատելու Ընդունելի ծախսերի տոկոսը, որոնք ենթակա են ֆինանսավորման այդ տեսակի համար Ներդրումային վարկի միջոցներից, որպեսզի ապահովի նման ծախսերի վճարման համար միջոցների հետագա տրամադրումը այնքան ժամանակ, քանի դեռ բոլոր այդ ծախսերը ամբողջությամբ չեն կատարվի:

Նման վերաբաշխումը կամ կրճատումը ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցման պահից և չի պահանջում Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում կատարել փոփոխություններ՝ Ստանդարտ պայմանների 10.04 Բաժնով նախատեսված կարգով:

**ԲԱԺԻՆ 2.05.** *Ներդրումային վարկի միջոցների տրամադրման արժույթը*

Ներդրումային վարկի ցանկացած գումարի տրամադրում կատարվում է Վարկի Արժույթով:

Եթե համաձայն Միջոցների տրամադրման հայտի՝ Ընդունելի ծախսերի վճարման համար անհրաժեշտ է տրամադրել միջոցներ Վարկի արժույթից տարբերվող այլ արժույթով, Կառավարիչը, գործելով Ստացողի հանձնարարությամբ և հանդես գալով որպես նրա գործակալ, Կառավարչի կողմից սահմանված պայմաններով Վարկի արժույթով ձեռք է բերում այն արժույթները, որոնք հիմնավոր կերպով պահանջվել են Ստացողի կողմից Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար: Նշված գործառույթը հանդիսանում է Նեդրումային վարկի միջոցների ծախսման գործառույթ և արտահայտվում է հաշվառման մեջ Վարկի արժույթով որպես Ներդրումային վարկով Ստացողի Հիմնական պարտք:

**ԲԱԺԻՆ 2.06.** *Հաշվառման վարում*

Կառավարիչը վարում է Ներդրումային վարկի միջոցներով գործառնությունների հաշվառում առանձին հաշիվներով կամ հաշվով՝ Վարկի արժույթով:

**ԲԱԺԻՆ 2.07.** *Արժույթների արժեքի գնահատում*

Այն դեպքում, երբ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի նպատակների համար անհրաժեշտություն է ծագում արտահայտել մեկ Արժույթի արժեքը այլ Արժույթով, նման արժեքը հիմնավոր կերպով որոշվում է Կառավարչի կողմից:

**ՀՈԴՎԱԾ III. Ներդրումային վարկի սպասարկումը և մարումը**

**ԲԱԺԻՆ 3.01.** *Վարկի վճարումներ*

Ներդրումային վարկի սպասարկման և մարման համար Ստացողը գումարներ է վճարում Կառավարչի հաշվին՝ համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի դրույթների (այսուհետ՝ Վարկի վճարումներ), այդ թվում՝

ա) միջնորդավճար, որը հաշվեգրվում է Ներդրումային վարկի ամբողջ սկզբնական գումարի վրա (այսուհետ՝ **Սկզբնական միանվագ միջնորդավճար**)՝ համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված դրույքաչափի: Սկզբնական միանվագ միջնորդավճարը վճարվում է միանվագ ոչ ուշ քան Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ստորագրման պահից 60 (վաթսուն) օր հետո, եթե Համաձայնագրում սահմանված չէ այլ ժամկետ,

բ) միջնորդավճար, որը հաշվեգրվում է Ներդրումային վարկի չօգտագործված գումարի համար (այսուհետ՝ **Պահեստավորման համար միջնորդավճար**)՝ համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված դրույքաչափի: Պահեստավորման համար միջնորդավճարը հաշվեգրվում է՝ սկսած Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ստորագրման պահից 60 (վաթսուն) օր հետո, ներառելով այն և մինչև Ներդրումային վարկի համապատասխան գումարների տրամադրման կամ նման գումարների չեղարկման օրը, չներառելով այն: Պահեստավորման համար միջնորդավճարը վճարվում է յուրաքանչյուր անցած Տոկոսային ժամանակահատվածի համար յուրաքանչյուր Վճարման ամսաթվին: Վերջին վճարումը կատարվում է այն Տոկոսային ժամանակահատվածի համար, երբ վրա

է հասել Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը: Հաշվարկի համար հիմք է ընդունված տարվա մեջ 360 (երեք հարյուր վաթսուն) օրը:

գ) Տոկոսներ, որոնք հաշվեգրվում են Ներդրումային վարկի հանված և չմարված գումարի համար (այսուհետ՝ **Տոկոսներ**)՝ համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված դրույքաչափի: Տոկոսները հաշվեգրվում են սկսած Ներդրումային վարկի տրամադրման համապատասխան ամսաթվերից և վճարվում են յուրաքանչյուր անցած Տոկոսային ժամանակահատվածի համար յուրաքանչյուր Վճարման ամսաթվի վրա հասնելուն պես: Հաշվարկի համար հիմք է ընդունված տարվա մեջ 360 (երեք հարյուր վաթսուն) օրը:

դ) Մարժա, որը հաշվեգրվում է Տոկոսների վրա՝ Ներդրումային վարկի հանված և չմարված գումարի համար (այսուհետ՝ **Մարժա**)՝ համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված դրույքաչափի: Մարժան հաշվեգրվում է՝ սկսած Ներդրումային վարկի տրամադրման համապատասխան ամսաթվերից և վճարվում է յուրաքանչյուր անցած Տոկոսային ժամանակահատվածի համար յուրաքանչյուր Վճարման ամսաթվի վրա հասնելուն պես: Հաշվարկի համար հիմք է ընդունված տարվա մեջ 360 (երեք հարյուր վաթսուն) օրը:

ե) Ռիսկի հավելավճար, որը հաշվեգրվում է Տոկոսների և մարժայի վրա՝ Ներդրումային վարկի հանված և չմարված գումարի համար (այսուհետ՝ **Ռիսկի հավելավճար**), համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված դրույքաչափի: Ռիսկի հավելավճարը հաշվեգրվում է՝ սկսած Ներդրումային վարկի տրամադրման համապատասխան ամսաթվերից, ներառելով դրանք մինչև մարման ամսաթվերը, չներառելով դրանք, և վճարվում է

կես տարին մեկ անգամ յուրաքանչյուր անցած Տոկոսային ժամանակահատվածի համար յուրաքանչյուր Վճարման ամսաթվի վրա հասնելուն պես: Հաշվարկի համար հիմք է ընդունված տարվա մեջ 360 (երեք հարյուր վաթսուն) օրը:

զ) Ներդրումային վարկի տրամադրված և չմարված գումարը (այսուհետ՝ **Հիմնական պարտք**)՝ համաձայն մարման ժամանակացույցի, սահմանված Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով:

է) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով և Ստանդարտ պայմաններով նախատեսված այլ վճարումներ՝ համապատասխան Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով:

Այն դեպքում, երբ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նախատեսվում է Վարկի վճարումների որևէ դրույքաչափի փոփոխություն, Կառավարիչը գրավոր ծանուցում է Ստացողին նման

դրույքաչափերի մասին յուրաքանչյուր Տոկոսային ժամանակահատվածի համար, անմիջապես դրանք սահմանելուց հետո:

**ԲԱԺԻՆ 3.02.** *Հիմնական պարտքի վաղաժամկետ մարում*

ա) Սույն բաժնի (բ) կետում նշված պայմանները պահպանելու դեպքում, Ստացողն իրավունք ունի կատարելու Հիմնական պարտքի հետևյալ գումարների վաղաժամկետ վերադարձ՝

-Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի Հիմնական պարտքի ամբողջ գումարը, որն առկա է վաղաժամկետ մարման ամսաթվի դրությամբ,

- Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի Հիմնական պարտքի գումարները, որոնք ենթակա են վճարման հիմնական պարտքի մարման մեկ կամ մի քանի ամսաթվերին, Ներդրումային վարկի մարման ժամկետների հակառակ կարգով, երբ ամենաուշ մարման ժամկետով Հիմնական պարտքի գումարը ենթակա է վճարման առաջին հերթին:

բ) Սույն բաժնի (ա) կետում նշված գումարների վաղաժամկետ վերադարձի իրականացման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պահպանումը՝

- Ստացողը Կառավարչին ծանուցում է ուղարկել վաղաժամկետ մարում կատարելու իր մտադրության մասին՝ վաղաժամկետ մարման ենթադրյալ ժամկետից ոչ պակաս քան 45 օր առաջ և նման ամսաթիվն ընդունելի է Կառավարչի համար,

- Վաղաժամկետ մարման ամսաթվի դրությամբ՝ Ստացողը կատարել է այդ ամսաթվին Վարկի վճարման ենթակա բոլոր վճարումները:

**ԲԱԺԻՆ 3.03.** *Վարկի մասնակի վճարում*

Եթե Կառավարիչը Ստացողից ստանում է Վարկի վճարման գումարից պակաս գումար, քան ենթակա էր վճարման Ստացողից դրա ստացման պահին, Կառավարիչը հաշվարկում է նշված գումարը որպես Վարկի վճարումների մարում հետևյալ կարգով՝

- առաջին հերթին՝ տուժանքի (տույժի, տուգանքի) վճարման համար
- երկրորդ հերթին՝ միջնորդավճարների վճարման համար
- երրորդ հերթին՝ Տոկոսների, Մարժայի և Ռիսկի հավելավճարի վճարման համար
- չորրորդ հերթին՝ Հիմնական պարտքի մարման համար:

**ԲԱԺԻՆ 3.04.** *Վարկի վճարումների կատարման ժամկետները*

Վարկի բոլոր վճարումները ենթակա են վճարման Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրով սահմանված ժամկետներում:

Վարկի վճարման Ստացողի պարտավորության կատարման ամսաթիվ է հանդիսանում Կառավարչի թղթակցային հաշվին դրամական միջոցների հաշվեգրման ամսաթիվը:

Վարկի վճարումների համար Կառավարչի բանկային հաշվի վավերապայմանները նշվում են Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրում: Նշած վավերապայմանների փոփոխման դեպքում, Կառավարիչը միակողմանի ծանուցում է այդ մասին Ստացողին նման փոփոխությունների մասին՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի համաձայն: Ստացողի համար վավերապայմանների փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցման մեջ նշված ամսաթվից՝ առանց Ստանդարտ պայմանների 10.04 Բաժնով նախատեսված կարգով Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու:

Եթե այն օրը, երբ Ստացողը պետք է կատարի վճարում Կառավարչին ըստ Համաձայնագրի աշխատանքային օր չէ, ապա վճարումը պետք է կատարվի Ստացողի կողմից դրան հաջորդող ամենամոտ աշխատանքային օրը:

**ԲԱԺԻՆ 3.05.** *Վարկի վճարման արժույթը*

ա) Վարկի բոլոր վճարումները Ստացողը կատարում է Վարկի արժույթով:

բ) Եթե վարկի վճարումների կատարման համար Ստացողին անհրաժեշտ է ձեռք բերել Վարկի արժույթ և Ստացողը դիմել է Կառավարչին նման արժույթ ձեռք բերելու խնդրանքով, Կառավարիչը, գործելով որպես Ստացողի գործակալ, Կառավարչի կողմից սահմանված պայմաններով Վարկի վճարումների կատարման համար ձեռք է բերում Վարկի արժույթ՝ Ստացողի կողմից Կառավարչի համար ընդունելի արժույթով կամ արժույթներով դրա համար բավարար միջոցներ ժամանակին փոխանցելուց հետո: Նման դեպքում Վարկի վճարումը համարվում է կատարված միայն այն Հիմնադրամին փոխանցելուց հետո, իսկ նման վճարման չափը համարվում է Վարկի արժույթով՝ Ստացողի կողմից տրամադրված միջոցների վաճառքից Կառավարչի կողմից ստացված գումարին հավասար:

**ԲԱԺԻՆ 3.06.** *Վարկի վճարման եղանակը*

ա) Վարկի ցանկացած վճարում, որը պետք է կատարվի Կառավարչի հաշվին ցանկացած երկրի արժույթով, իրականացվում է այն եղանակով և արժույթով, որը ձեռք է բերվել տվյալ երկրի օրենսդրությամբ նման վճարման իրականացման և Կառավարչի հաշվին Կառավարչի դեպոզիտարիաներից մեկում, որն իրավասու է ընդունելու ավանդներ այդ արժույթով նման արժույթի ավանդադրման համար թույլատրված եղանակով:

բ) Վարկի բոլոր վճարումներն իրականացվում են՝ առանց Հիմնադրամի մասնակից պետության կողմից կամ դրա տարածքում սահմանված որևէ սահմանափակումների, և առանց հարկերի պահումների և հաշվեգրումների, որոնք գանձվում են Հիմնադրամի մասնակից պետության կողմից կամ դրա տարածքում:

գ) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրերի նկատմամբ չեն կիրառվում Հիմնադրամի մասնակից պետության կողմից կամ դրա տարածքում Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրի կնքման, հանձնման կամ գրանցման կապակցությամբ գանձվող Հարկերը,

դ) Վարկի բոլոր վճարումները Ստացողի կողմից իրականացվում են առանց Ստացողի կողմից հակընդեմ պահանջների, պահումների կամ գանձումների իրավունքի: Կառավարիչն իրավունք ունի կատարելու փոխադարձ հակընդեմ պահանջների հաշվանցում Ստացողի հետ հաշվարկների ժամանակ:

ե) եթե Ստացողը պետք է կատարի Վարկի վճարում Հարկերի պահումներով կամ գանձումներով կամ այլ հիմունքներով, ներառյալ թղթակից բանկերի միջնորդավճարները, ապա Ստացողի կողմից վճարվող գումարը պետք է ավելացվի այն չափով, որպեսզի անհրաժեշտ պահումից կամ գանձումից հետո Կառավարիչը ստանա գումար, հավասար այն գումարին, որը նա կստանար եթե նման պահումներ կամ գանձումներ չկատարվեին կամ չպահանջվեին:

## ՀՈԴՎԱԾ IV. Նախագծի իրականացում

### ԲԱԺԻՆ 4.01 *Նախագծի իրականացում*

Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրի շրջանակներում Ստացողն ապահովում է՝

ա) Նախագծի իրականացումը՝

- պատշաճ կարգապահությամբ և արդյունավետությամբ,
- պատշաճ վարչական, տեխնիկական, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական նորմերին և պրակտիկային համապատասխան,
- Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

բ) Նախագծի ֆինանսավորման համար դրամական միջոցների, ինչպես նաև տեխնիկական միջոցների, սարքավորումների, ծառայությունների և այլ ռեսուրսների տրամադրումը, որոնք պահանջվում են Նախագծի արդյունավետ իրականացման համար՝ Նախագծի արդյունավետ իրականացումն ապահովող ժամկետներում,

գ) Նախագծի իրականացման համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումը Ներդրումային վարկի միջոցների հաշվին՝ համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրում նշված Կառավարչի կողմից սահմանված գնումների ընթացակարգերի,

դ) բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցների ձեռնարկումը Նախագծի համար, անհրաժեշտ և Ներդրումային վարկի միջոցներից ֆինանսավորվող ցանկացած ապրանքի ապահովագության համար՝ բոլոր տեսակ ռիսկերից դրանց ձեռք բերման, տեղափոխման և դրանց օգտագործման կամ մոնտաժման վայր առաքելու ժամանակ: Նման ապահովագրության հետ կապված ցանկացած փոխհատուցում վճարվում է ազատ շրջանառվող արժույթով՝ նման ապրանքերի փոխարինման կամ վերանորոգման նպատակով,

դ) Նախագծի ֆինանսավորման համար հատկացված միջոցներով ձեռք բերված բոլոր ապրանքների, աշխատանքների և ծառայությունների օգտագործումը բացառապես Նախագծի նպատակների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարիչը համաձայնում է այլ բանի,

ե) բոլոր անհրաժեշտ և բավարար միջոցների ձեռնարկումը հողամասերի և հողամասերի նկատմամբ իրավունքների ձեռք բերման համար, որոնք պահանջվում են Նախագծի կատարման համար և Կառավարչի հայտով նրան անհապաղ բավարար ապացույցների տրամադրումը այն մասին, որ նման հողամասերը և հողամասերի նկատմամբ իրավունքները առկա են անհրաժեշտ ծավալով Նախագծի նպատակների իրականացման համար,

զ) Նախագծին առնչվող բոլոր օբյեկտների պատշաճ շահագործման և պահպանման իրականացումը, ինչպես նաև ըստ անհրաժեշտության նման օբյեկտների ամբողջ անհրաժեշտ վերանորոգման և վերակառուցման անհապաղ կատարումը,

է) Նախագծի առանձնահատկությունից ելնելով՝ կիրառելի միջազգային և ազգային ստանդարտների պահմանումը, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի, աշխատանքի և անվտանգության տեխնիկայի պահպանման հարցերը:

**ԲԱԺԻՆ 4.02.** *Պլաններ, փաստաթղթեր, հաշվառում*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Ստացողն ապահովում է՝

ա) ըստ պատրաստվածության աստիճանի և այն աստիճանի մանրամասնությամբ, որը հիմնավոր ձևով հայցվում է Կառավարչի կողմից՝ բոլոր պլանների, ժամանակացույցների, Ներդրումային վարկի միջոցների հաշվին գնումների փաստաթղթերի, պայմանագրային փաստաթղթերի (ներառյալ պայմանագրերով սկզբնական հաշվառման փաստաթղթերը), Նախագծին վերաբերող հաշվետվությունների, ինչպես նաև այդ փաստաթղթերին կից

ցանկացած էական փոփոխությունների կամ լրացումների Կառավարչին տարամադրումը,

բ) հաշվառման փաստաթղթերի վարումը, որոնք բավարար են Նախագծի իրականացման ընթացքի գնահատման համար (ներառյալ Նախագծի ծախսերը և շահույթը, որը պետք է ստացվի դրանից)՝ Ներդրումային վարկի միջոցների հաշվին գնված ապրանքների, աշխատաքների և ծառայությունների որոշման և Նախագծի շրջանակներում դրանց օգտագործման մասին տեղեկատվության տրամադրման նպատակով, և այդ հաշվառման փաստաթղթերի տրամադրումը Կառավարչին ըստ նրա հայտի,

գ) Ներդրումային վարկի միջոցների հաշվին կատարված ծախսերը հաստատող սկզբնական հաշվառման բոլոր փաստաթղթերի պահպանումը (ներառյալ պայմանագրերը, ակտերը, հաշվետվությունները, հաշիվները, հաշիվ-ապրանքագրերը, ստացականները, անդորրագրերը և այլ փաստաթղթեր) մինչև հետևյալ ժամկետներից մեկի լրանալը, որը ավելի ուշ է վրա հասնում՝

- աուդիտորների կողմից ստուգված Նախագծի ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել է ներդրումային վարկի միջոցների վերջին տրամադրումը, Կառավարչի կողմից ստացվելուց մեկ տարի հետո,

- Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվի վրա հասնելու պահից երկու տարի հետո:

Նշված ժամանակահատվածի ընթացքում Ստացողը Կառավարչի ներկայացուցիչներին տրամադրում է նման հաշվառման փաստաթղթերն ուսումնասիրելու հնարավորություն:

**ԲԱԺԻՆ 4.03.** *Նախագծի մոնիտորինգ և գնահատում*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում, Ստացողն ապահովում է՝

ա) Նախագծի իրականացման ընթացքի և դրա նպատակների իրականացման մշտական մոնիտորինգ և գնահատում՝ օգտագործելով, ընդ որում, Կառավարչի համար ընդունելի ցուցիչներ,

բ) Կառավարչին ըստ ձևի և բովանդակության բավարարող՝ պարբերաբար հաշվետվությունների կազմումը՝ ամփոփելով նման մոնիտորինգի և գնահատման արդյունքները և շարադրելով Նախագծի հետագա արդյունավետ և հաջող կատարումը ապահովելու և դրա նպատակներին հասնելու համար առաջարկվող միջացառումները,

գ) Սույն բաժնի (բ) կետում նշված հաշվետվություններից յուրաքանչյուրի օպերատիվ, ըստ պատրաստության աստճանի, տրամադրումը Կառավարչին, նման հաշվետվությունների կապակցությամբ Ստացողի հետ կարծիքների փոխանակման հնարավորության տրամադրումը Կառավարչին, ինչպես նաև Կառավարչի կողմից առաջարկված միջոցառումների իրականացումը՝ հաշվի առնելով կոնկրետ հարցերով Կառավարչի դիրքորոշումը,

դ) Նախագծի իրականացման, Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով Ստացողի կողմից իր պարտավորությունների կատարման և Նախագծի նպատակների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը և Կառավարչին ուղարկումը՝ Ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից ոչ ուշ, քան վեց ամիս հետո, կամ ավելի վաղ ժամկետում, որը կարող է սահմանվել այդ նպատակի համար Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով, այն ծավալով և մանրամասնությամբ, որոնք հիմնավոր հայցվել են Կառավարչի կողմից, ինչպես նաև Նախագծի արդյունքների կայունության ապահովման ուղղությամբ գործողությունների պլանի պատրաստումը և Կառավարչին ուղարկումը:

**ԲԱԺԻՆ 4.04.** *Ֆինանսական կառավարում: Ֆինանսական հաշվետվություն: Աուդիտ*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Ստացողն ապահովում է՝

ա) Ներդրումային վարկի միջոցների ֆինանսական կառավարման համակարգի ներդրումը, ներառյալ հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշիվների վարումը և ֆինանսական հաշվետվություների կազմումը՝ Կառավարչի համար ընդունելի հաշվապահական հաշվառման և հաշետվության կանոններին համապատասխան, որոնք հետևողականորեն կիրառվում են և պատշաճ կերպով արտացոլում են Նախագծի հետ կապված գործունեությունը, ռեսուրսները և ծախսերը,

բ) սույն բաժնի (ա) կետում նշված ֆինանսական հաշվետվության աուդիտի անցկացումը յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար (կամ Կառավարչի հետ համաձայնեցված այլ ժամկետում)՝ Կառավարչի համար ընդունելի աուդիտի հետևողականորեն կիրառվող ստանդարտներին համապատասխան՝ ներգրավելով Կառավարչի համար ընդունելի անկախ աուդիտորների,

գ) Ներդրումային վարկի տրամադրման մասին համապատասխան համաձայնագրում նշված ժամկետներում Կառավարչին նման աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվության հաստատված պատճենների, ֆինանսական հաշվետվության վերաբերյալ վերը նշված աուդիտորների կարծիքների (եզրակացությունների) տրամադրումը՝ Կառավարչին բավարարող

ծավալով և մանրամասնությամբ, ինչպես նաև աուդիտորական ստուգում անցած այլ ֆինանսական հաշվետվության վերաբերյալ տեղեկատվության և աուդիտորական եզրակացության տրամադրումը, որը Կառավարիչը կարող է պարբերաբար հիմնավորված պահանջել:

**ԲԱԺԻՆ 4.05.** *Կառավարչի և Ստացողի փոխգործակցությունը*

Ստացողը և Կառավարիչն աշխատում են սերտ համագործակցությամբ՝ Նախագծի առաջադրանքների և նպատակների իրականացման ապահովման, ինչպես նաև Նախագծի միջոցառումների ժամանակին և արդյունավետ կատարման համար, այդ թվում՝

ա) ըստ անհրաժեշտության՝ կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ փոխանակում են կարծիքներ՝ կապված Նախագծի իրականացման և Ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարման հետ, և մյուս կողմին տրամադրում են նման հարցերի հետ կապված ամբողջ տեղեկատվությունը, որը նա կարող է հիմնավորված պահանջել,

բ) անհապաղ տեղեկացնում են միմյանց ցանկացած հանգամանքների մասին, որոնք հանդիսանում են կամ կարող են խոչընդոտ հանդիսանալ այդ հարցերի քննարկման և լուծման համար:

**ԲԱԺԻՆ 4.06.** *Նախագծի վերահսկումը Ստացողի տարածքում*

Ստացողը Կառավարչի ներկայացուցիչներին ընձեռում է հնարավորություն՝

ա) այցելելու Ստացողի տարածքի ցանկացած հատվածը՝ Նախագծի իրականացման հետ կապված կամ Ներդրումային վարկի հետ առնչություն ունեցող նպատակներով,

բ) այցելելու Նախագծի իրականացման հետ կապված ցանկացած օբյեկտներ և շինարարական հրապարակներ,

գ) վերահսկելու Նախագծի շրջանակներում Ներդրումային վարկի միջոցների հաշվին գնված ապրանքները, ինչպես նաև Նախագծին առնչվող ցանկացած արտադրությունները, տեղադրումները, կառույցները, հրապարակները, գործարանները, շենքերը, գույքը, սարքավորումները և նյութերը,

դ) ստանալու և վերահսկելու Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված իր պարտավորությունների կատարման հետ կապված հաշվառման փաստաթղթերը:

**ՀՈԴՎԱԾ V. Տեղեկատվության տրամադրումը**

**ԲԱԺԻՆ 5.01.** *Ֆինանսական և տնտեսական փվյալներ*

Ստացողը տրամադրում է Կառավարչին՝

ա) իր տարածքում ֆինանսական և տնտեսական պայմանների մասին ամբողջ տեղեկատվությունը, որը հիմնավորված պահանջում է Կառավարիչը՝ ներառյալ նրա վճարային հաշվեկշռի և Արտաքին պարտքի մասին տեղեկատվությունը,

բ) նմանատիպ տեղեկատվություն նրա սուբյեկտների, քաղաքական և վարչական մարմինների, հիմնարկությունների և ցանկացած կազմակերպությունների մասին, որոնք՝

- պատկանում են Ստացողին,
- վերահսկվում են Ստացողի կողմից,
- գործում են Ստացողի անունից՝ նրա շահերից ելնելով,
- գործում են նման ցանկացած մարմնի կամ կազմակերպության անունից և դրա շահերից ելնելով,
- կատարում են Ստացողի կենտրոնական (ազգային) բանկի կամ արժութային կայունացնող հիմնադրամի գործառույթները կամ համանման գործառույթներ:

## ՀՈԴՎԱԾ VI. Ներդրումային վարկի ապահովումը

**ԲԱԺԻՆ 6.01.** *Ներդրումային վարկի ապահովումը*

ա) Ստացողը պարտավորվում է ապահովել, որ նրա ոչ մի արտաքին պարտք առավելություն չունենա Հիմնադրամի միջոցներից ստացած Ներդրումային վարկի պարտքի նկատմամբ՝ հատկացման, իրացման կամ Ստացողի ակտիվների բաշխման մասով:

բ) Այն դեպքում, երբ Ստացողի Արտաքին պարտքի գծով որևէ վարկատուի մոտ ծագում է Պահման իրավունք նման պետության որևէ Պետական ակտիվների նկատմամբ, որը նախատեսում է նման վարկատուի պահանջի գերակայող բավարարում Պետական ակտիվների հաշվին Կառավարչի պահանջների համեմատ, ապա եթե Կառավարչի հետ այլ պայմանավորվածություն ձեռք չբերվի, նման Պահման իրավունքը դրա ծագման փաստի ուժով իսկ և առանց Կառավարչի և Հիմնադրամի կողմից հավելյալ գանձումների հավասար չափով և համամասնորորեն ճանաչվում է Վարկի բոլոր վճարումների ապահովում:

## ՀՈԴՎԱԾ VII. Չեղարկումը: Կասեցումը: Վաղաժամկետ մարման պահանջը

**ԲԱԺԻՆ 7.01.** *Ստացողի կողմից Ներդրումային վարկի գումարների չեղարկումը*

Ստացողն իրավունք ունի, ծանուցելով Կառավարչին, չեղարկելու Ներդրումային վարկի ցանկացած չօգտագործված գումար:

Ստացողի կողմից նման ծանուցում ուղարկելու ամսաթիվը հանդիսանում է դրանում նշված Ներդրումային վարկի գումարի չեղարկման ամսաթիվ: Չեղարկումն ուժի մեջ է մտնում Կառավարչի կողմից Ստացողին չեղարկման մասին գրավոր հաստատում ուղարկելու ամսաթվից:

Եթե նշված ծանուցումը Կառավարչի կողմից ստացվում է Ստացողի կողմից այն ուղարկելու պահից մեկ օրացուցային ամիսը լրանալուց հետո, դրանում նշված գումարի չեղարկման ամսաթիվ է հանդիսանում Կառավարչի կողմից Ստացողին չեղարկման մասին գրավոր հաստատում ուղարկելու ամսաթիվը:

**ԲԱԺԻՆ 7.02.** *Ներդրումային վարկի միջոցների տրամադրման Ստացողի իրավունքի կասեցում*

Այն դեպքում, երբ կկատարվի և կշարունակվի ստորև նշված իրադարձություններից որևէ մեկը, Կառավարիչն իրավունք ունի Ստացողին ծանուցելով, ամբողջությամբ կամ մասնակի կասեցնելու Ներդրումային վարկի միջոցների տրամադրման Ստացողի իրավունքը: Նման կասեցումը կգործի Կառավարչի կողմից Ստացողին ծանուցելու պահից մինչև այն պահը, երբ կվերանան կասեցումն առաջացրած պատճառերը, եթե Կառավարիչը չի ծանուցի Ստացողին միջոցների տրամանդրման իրավունքի վերականգնման մասին մինչև կասեցման պատճառների վերացումը.

ա) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով սահմանված ժամկետում Ստացողը չի կատարել Վարկի որևէ վճարում ամբողջությամբ կամ մասնակի,

բ) Ստացողը չի կատարել կամ չի ապահովել Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագրով, Հիմնադրամի մասին կանոնակարգով, Հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագրով, ինչպես նաև նրա հետ կնքված Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին ցանկացած Համաձայնագրով ստանձնած իր պարտավորություններից որևէ մեկի կատարումը,

գ) Ստացողը չի կատարել Հիմնադրամի մասնակից պետությանը, Կառավարչին կամ ՄՖԿ հասանելիք Հիմնական պարտքի մարման, տոկոսների կամ ցանկացած այլ գումարի վճարում՝ Ստացողի և Հիմնադրամի այդ մասնակից պետության, Կառավարչի կամ ՄՖԿ միջև կնքված համապատասխան համաձայնագրով սահմանված ժամկետներում,

դ) Իրավաբանական անձը, որի բաժնետեր կամ մասնակից է հանդիսանում Ստացողը, չի կատարել Կառավարչին հասանելիք Հիմնական պարտքի մարման,

տոկոսների կամ ցանկացած այլ գումարի վճարումներ՝ նման իրավաբանական անձի և Կառավարչի միջև կնքված համապատասխան Համաձայնագրով սահմանված ժամկետներում,

ե) ծագել է արտակարգ իրավիճակ, որը քիչ հավանական է դարձնում այն, որը Նախագիծը կարող է իրականացվել կամ, որ կողմերից որևէ մեկը կկարողանա կատարել Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները,

զ) Ստացողի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի կապակցությամբ ներկայացված ցանկացած տեղեկատվություն կամ հաշվետվություն էականորեն ստույգ չեն:

է) տեղի է ունեցել ստորև բերված իրադարձություններից մեկը, որը վերաբերում է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված պարտավորություններին այն ֆինանսավորման տրամադրման մասով, որը պետք է տրամադրվեր Նախագծի նպատակների համար (Համաֆինանսավորում) որևէ կազմակերպության կողմից, բացառությամբ Կառավարչի (Համաֆինանսավորող կազմակերպություն)

- Ներդրումային  վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված է ժամկետ, որի վրա հասնելու ժամանակ Համաֆինանսավորող կազմակերպության հետ կնքված Համաֆինանսավորման տրամադրման մասին Համաձայնագիրը (Համաֆինանսավորման համաձայնագիր) պետք է մտներ ուժի մեջ, սակայն Համաֆինանսավորման մասին համաձայնագիրը չի մտել ուժի մեջ այդ ժամկետում կամ Կառավարչի հետ համաձայնեցված ավելի ուշ ժամկետում,

Համաֆինանսավորման միջոցների ստացման իրավունքը ամբողջությամբ կամ մասնակի կասեցվել, չեղարկվել կամ դադարեցվել է Համաֆինանսավորող կազմակերպության կողմից Համաֆինանսավորման մասին համաձայնագրի պայմանների համաձայն, եթե նման կասեցումը, չեղարկումը կամ դադարեցումը կապված էին Համաֆինանսավորում ստացողի կողմից Համաֆինանսավորման մասին համաձայնագրով ստանձնած իր պարտավորություններից որևէ մեկը չկատարելու հետ:

- Համաֆինանսավորող կազմակերպությունը պահանջ է ներկայացրել Նախագծի համաֆինանսավորման համար հատկացված միջոցների վաղաժամկետ մարման մասին, եթե նման պահանջը առաջացել է Համաֆինանսավորում ստացողի կողմից Համաֆինանսավորման մասին համաձայնագրով ստանձնած իր պարտավորություններից որևէ մեկը չկատարելու հետ:

Սույն  կետի դրույթները չեն կիրառվում այն դեպքում, երբ Ստացողը Կառավարչին ներկայացնում է Կառավարչին բավարարող ապացույցներ, որ Նախագծի Համաֆինանսավորման համար բավարար միջոցներ կարելի է ստանալ այլ աղբյուրներից՝ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի պայմաններով:

ը) Ստացողը, առանց Կառավարչի համաձայնության ամբողջությամբ կամ մասնակի վերազիջել է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված իր պարտավորություններից որևէ մեկը,

թ) Ստացողը առանց Կառավարչի համաձայնության, վաճառել է, հանձնել է վարձակալության, փոխանցել է, վերազիջել կամ այլ կերպ կատարել է որևէ գույքի կամ ակտիվների օտարում, որոնք ամբողությամբ կամ մասնակի ֆինանասավորվում էին Ներդրումային վարկի միջոցներից՝ պայմանով, սակայն, որ սույն կետի դրույթները չեն տարածվում այն գործառույթների վրա, որոնք իրականացվում են սովորական գործունեության կարգով, որոնք Կառավարչի կարծիքով էական և բացասական ազդեցություն չեն գործում Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված Ստացողի՝ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով սահմանված կամ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրին համապատասխան ստանձնած իր պարտավորությունների կատարման կամ Նախագծի նպատակների իրականացումն ապահովելու ունակության վրա:

ժ) Ստացողը դադարում է լինել Հիմնադրամի մասնակից,

ժա) տեղի է ունեցել ցանկացած այլ իրադարձություն, որը նշված է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում սույն բաժնի նպատակների համար:

## **ԲԱԺԻՆ 7.03.** *Ներդրումային վարկի միջոցների տրամադրման՝ Ստացողի իրավունքի չեղարկում*

Այն դեպքում, երբ կկատարվի և կշարունակվի ստորև նշված իրադարձություններից որևէ մեկը, Կառավարիչն իրավունք ունի Ստացողին ծանուցելով, չեղարկել Ներդրումային վարկի միջոցների որևէ մասի տրամադրման Ստացողի իրավունքը: Նման ծանուցման ուղարկման ամսաթիվը հանդիսանում է դրանում նշված գումարի չեղարկման ամսաթիվը:

ա) Ներդրումային վարկի միջոցների տրամադրման Ստացողի իրավունքը կասեցվել է Ներդրումային վարկի չօգտավործված որևէ գումարի նկատմամբ ավելի քան երեսուն օր անընդմեջ,

բ) Կառավարիչը, խորհրդակցելով Ստացողի հետ, որոշում է ընդունել այն մասին, որ Ներդրումային վարկի չօգտագործված որևէ գումար չի պահանջվի Ընդունելի ծախսերի ֆինանսավորման համար:

գ) Կառավարիչը Ներդրումային վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա որևէ պայմանագրի կապակցությամբ, հիմնավորված եզրակացնում է, որ Ստացողի ներկայացուցիչները այդ պայմանագրով կամ դրա կատարման արդյունքում գնումների ընթացքում ներգրավված են եղել կաշառակերության, խարդախության, դավադրության կամ ճնշում գործադրելու մեջ, իսկ Ստացողը չի

ապահովել Կառավարչին բավարարող ժամանակին և պատշաճ միջոցների ընդունում իրավիճակը շտկելու համար: Այս դեպքում Կառավարիչը որոշում է Ներդրումային վարկի միջոցների չեղարկման ենթակա գումարները՝ ելնելով նման պայմանագրի ծախսերի ծավալից, որը Կառավարչի տեսակետից, ընդունելի կլիներ Ներդրումային վարկի միջոցներից ֆինանսավորման համար:

դ) Կառավարիչը հիմնավորված եզրակացնում է, որ Ներդրումային վարկի միջոցներից վճարվող որևէ պայմանագրի գնումները չեն համապատասխանում Ներդրումային վարկի տրամադրման մասին համապատասխան Համաձայնագրում շարադրված կամ նշված ընթացակարգերին: Այս դեպքում Կառավարիչը որոշում է Ներդրումային վարկի միջոցների չեղարկման ենթակա գումարները՝ ելնելով նման պայմանագրի ծախսերի ծավալից, որը Կառավարչի տեսակետից, ընդունելի կլիներ Ներդրումային վարկի միջոցներից ֆինանսավորման համար:

ե) Վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի Ամսաթվի վրա հասնելուց հետո մնում է չօգտագործված մնացորդ:

ե) Տեղի է ունեցել ցանկացած այլ իրադարձություն՝ նշված Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում սույն բաժնի նպատակերի համար:

**ԲԱԺԻՆ 7.04.** *Հիմնական պարտքի մարման ժամանակացույցի փոփոխություն չեղարկման դեպքում*

Եթե Կառավարիչը և Ստացողը չեն պայմանավորվում այլ բանի մասին, ապա, Ներդրումային վարկի Հիմնական պարտքի մարման նոր ժամանակացույց սահմանելիս, չեղարկման հետևանքով Ներդրումային վարկի ցանկացած չեղարկված գումար հանվում է համամասնորեն Ներդրումային վարկի Հիմնական պարտքի գումարներից՝ նման չեղարկման ամսաթվից հետո վրա հասնող մարման ժամկետներով:

**ԲԱԺԻՆ 7.05.** *Ներդրումային վարկի Հիմնական պարտքի և այլ վճարումների վաղաժամկետ մարման պահանջի ներկայացում*

Կառավարիչն իրավունք ունի, գրավոր ծանուցելով Ստացողին, պահանջելու Ներդրումային վարկի Հիմնական պարտքի ամբողջ գումարի կամ դրա մի մասի վաղաջամկետ մարում՝ Վարկի այլ վճարումների հետ միասին, որոնք ենթակա են վճարման՝ համաձայն Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի կամ Ստանդարտ պայմանների, հետևյալ դեպքերում՝

ա) եթե տեղի է ունեցել և Կառավարչի կողմից Ստացողին համապատասխան ծանուցում ուղարկելու ամսաթվից 30 (երեսուն) օրվա

ընթացքում շարունակվում է Ստանդարտ պայմանների 7.02 բաժնում թվարկված իրադարձություններից որևէ մեկը, եթե այլ ժամկետ նշված չէ ծանուցման մեջ:

բ) Տեղի է ունեցել ցանկացած այլ իրադարձություն՝ նշված Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում սույն բաժնի նպատակների համար, և այդ իրադարձությունը շարունակվում է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված ժամանակահատվածի ընթացքում (այդպիսին լինելու դեպքում):

Կառավարչի կողմից վաղաժամկետ մարման մասին ծանուցում ստանալուց հետո դրանում նշված Հիմնական պարտքի գումարները և Վարկի այլ վճարումները ենթակա են անհապաղ վճարման:

**ԲԱԺԻՆ 7.06.** *Տուժանք վարկի Վճարումների ժամկեփանց մարման համար*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված Հիմնական պարտքի, Տոկոսների, Մարժայի, Ռիսկի հավելավճարի, Պահեստավորման համար միջնորդավճարի, Սկզբնական միանվագ միջնորդավճարի վերադարձման պարտավորության կատարման հետաձգման դեպքում, Ստացողը ժամկետանց պարտքի գումարի հետ մեկտեղ, Կառավարչին վճարում է տուժանք մարման հետաձգման համար Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում նշված չափով, որը հաշվեգրվում է ժամկետանց պարտքի ամբողջ գումարի վրա հետաձգված յուրաքանչյուր օրվա համար: Տուժանքը հաշվեգրվում է այն ամսաթվին հաջորդող օրվանից, երբ նման վճարումը պետք է կատարվեր մինչև Ստացողի ժամկետանց պարտքի գումարը Կառավարչի հաշվին հաշվեգրման օրը:

**ԲԱԺԻՆ 7.07.** *Ներդրումային վարկի փրամադրման մասին Համաձայնագրի գործողությունը չեղարկումից, կասեցումից կամ վաղաժամկեփ մարման պահանջ ներկայացնելուց հեփո*

Չնայած սույն հոդվածին համապատասխան ցանկացած չեղարկմանը, կասեցմանը կամ վաղաժամկետ վճարման պահանջի ներկայացմանը, Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի բոլոր դրույթները շարունակում են գործել ամբողջ ծավալով, եթե սույն Ստանդարտ պայմաններով կամ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

## ՀՈԴՎԱԾ VIII. Պարտավորությունների հարկադիր կատարում: Արբիտրաժ

**ԲԱԺԻՆ 8.01.** *Պարտավորությունների հարկադիր կատարման հնարավորություն*

ա) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված Ստացողի իրավունքներն ու պարտականություններն ունեն իրավաբանական ուժ և ապահովված են հարկադիր կատարման հնարավորությամբ՝ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի, Ստանդարտ պայմանների և Հիմնադրամի այլ փաստաթղթերի դրույթներին համապատասխան, անկախ Ստացողի օրենսդրության որևէ այլ դրույթներից:

բ) Ստացողն իրավունք չունի պնդելու, որ Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի և Ստանդարտ պայմանների որևէ դրույթ չունի իրավաբանական ուժ կամ ենթակա չէ հարկադիր կատարման՝ Ստացողի օրենսդրության, Հիմնադրամի փաստաթղթերի և/կամ Կառավարչի փաստաթղթերի որևէ դրույթի հիման վրա:

գ) Սույնով Ստացողը հաստատում և հավաստիացնում է Կառավարչին, որ նրա մոտ և նրա գույքի նկատմամբ բացակայում է որևէ դատական անձեռնմխելիություն, հայցի ապահովման միջոցների նկատմամբ անձեռնմխելիություն, որոշման կամ հրամանի հարկադիր կատարման նկատմամբ անձեռնմխելիություն, և սույնով Ստացողը անդառնալիորեն հրաժարվում է իր կամ իր գույքի նկատմամբ ցանկացած անձեռնմխելիությունից, որը նա կարող է ձեռք բերել, լինի դա պետական կամ այլ անձեռնմխելիություն ցանկացած պետությունում հաշվանցումից կամ դատական ընթացակարգերից, ներառյալ ցանկացած դատարանի կամ ատյանի նկատմամբ անձեռնմխելիությունը, ինչպես նաև իր գույքի անձեռնմխելիությունը նախնական ապահովման միջոցներից կամ այլ ապահովման միջոցներից կամ դատական որոշման կատարումից,

դ) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում և/կամ Ստանդարտ պայմաններում պարունակվող ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես հրաժարում, ուրացում կամ փոփոխություն անձեռնմխելիությունների, արտոնությունների, առավելությունների և պատասխանատվությունից ազատելու նկատմամբ, որոնք նախատեսված են Կառավարչի ստեղծումը և գոծունեությունը կանոնակարգող միջազգային պայմանագրերով, այլ կիրառելի միջազգային պայմանագրերով և իրավունքով:

ե) Կառավարչի դեմ Հայցերը և գործերը կարող են հարուցվել միայն Կառավարչի կողմից անձեռնմխելիությունից, արտոնություններից կամ առավելություններից հրաժարվելուց հետո, որը կատարվել է Կառավարչի կողմից այն աստիճանով և այն պայմաններով, որոնք, նրա կարծիքով, համապատասխանում են Կառավարչի շահերին: Անձեռնմխելիությունից, արտոնություններից կամ առավելություններից (դրանց մի մասից) նման

հրաժարումը պետք է կատարվի Կառավարչի հիմնադրման մասին համաձայնագրով նախատեսված կարգով:

**ԲԱԺԻՆ 8.02.** *Իրավունքների իրականացման հետաձգում*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով որևէ պարտավորություն չկատարելու համար Կողմերից յուրաքանչյուրին վերապահված որևէ իրավունքի, լիազորության կամ իրավական պաշտպանության միջոցի իրականացման հետաձգելը կամ դրանք չիրականացնելը չի նվազեցնում այդ իրավունքը, լիազորությունը կամ իրավական պաշտպանության միջոցը և չի համարվում դրանցից հրաժարում կամ պարտավորությունները չկատարելու հետ լուռ համաձայնություն:

Որևէ պարտավորություն չկատարելու դեպքում, մի կողմի գործողություն չձեռնարկելը կամ պարտավորությունը չկատարելու հետ լուռ համաձայնվելը չի ազդում և չի նվազեցնում այդ կողմի իրավունքը, լիազորությունը կամ իրավական պաշտպանության միջոցը՝ ցանկացած այլ պարտավորություն չկատարելու կամ դրա հետագայում չկատարելու կապակցությամբ:

**ԲԱԺԻՆ 8.03.** *Արբիտրաժ*

ա) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի կողմերի միջև ցանկացած տարաձայնություն կամ այդ կողմերից որևէ մեկի ցանկացած պահանջ մյուս կողմի հանդեպ, որը ծագել է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի կապակցությամբ և չի կարգավորվել կողմերի միջև պայմանավորվածությամբ ծագման պահից առնվազն վեց ամսվա ընթացքում, փոխանցվում է վեճի ցանկացած կողմի կողմից Հիմնադրամի Խորհրդի լուծմանը:

բ) այն դեպքում, երբ վեճը չի լուծվել Հիմնադրամի Խորհրդի կողմից սույն բաժնի (ա) կետին համապատասխան, վեճի ցանկացած կողմ կարող է փոխանցել վեճը միջնորդ դատարանի քննությանը, որը կազմված է երեք միջնորդ դատավորներից, որոնցից մեկը նշանակվում է Հիմնադրամի Խորհրդի կողմից, մյուսը՝ Ստացողի, իսկ երրորդը՝ նշանակված միջնորդ դատավորների համաձայնությամբ, կամ եթե դատավորները իրենց նշանակման օրվանից վեց ամսվա ընթացքում համաձայնության չգան՝ Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային Դատարանի Նախագահի կողմից: Երրորդ միջնորդ դատավորի ընտրության ժամանակ ընտրված դատավորներն առաջնորդվում են այն կանոնով, որ նա չի կարող լինել վիճող կողմի պետության քաղաքացի կամ վիճող կողմի միջազգային կազմակերպության ներկայացուցիչ:

գ) Վեճի քննության ժամանակ միջնորդ դատավորներն առաջնորդվում են ՅՈՒՆՍԻՏՐԱԼ Արբիտրաժային կանոնակարգով: Արբիտրաժային քննության լեզուն ռուսերենն է: Արբիտրաժային քննության վայրը՝ Մոսկվա քաղաքն է:

դ) Չնայած ՅՈՒՆՍԻՏՐԱԼ Արբիտրաժային կանոնակարգի դրույթներին, արբիտրաժային դատարանն իրավասու չէ Կառավարչի դեմ ձեռնարկել պաշտպանության ժամանակավոր միջոցներ կամ հայցի ապահովման միջոցներ մինչև արբիտրաժային որոշում կայացնելը, և Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի Կողմերից ոչ ոք չի կարող դիմել որևէ դատական ատյան Կառավարչի հանդեպ պաշտպանության ժամանակավոր միջոցներ կամ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու միջնորդությամբ մինչև արբիտրաժային որոշում կայացնելը:

ե) Արբիտրաժային դատարանն իրավասու է քննել և ցանկացած վարույթում, վճռում կամ արբիտրաժային որոշման մեջ ներառել պատշաճ կեպով Կառավարչի կամ Ստացողի կողմից նրա քննությանը հանձնված ցանկացած վեճ կամ տարաձայնություն, այնքանով, որքանով նման վեճը կամ տարաձայնությունը ծագում են Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրից: Ընդ որում, հաշվի առնելով սույն կետը, արբիտրաժային վարույթում չեն ներառվում ոչ մի այլ կողմեր և այն չի միավորվում այլ որևէ այլ կողմերի մասնակցությամբ վարույթի հետ:

զ) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի նպատակների համար կիրառելի իրավունք է հանդիսանում միջազգային հանրային իրավունքը, որի համար, Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի նպատակների համար, աղբյուրներն են հանդիսանում՝

- Հիմնադրամի հիմնադրման մասին Պայմանագիրը, Հիմնադրամի միջոցների կառավարման մասին Համաձայնագիրը, Կառավարչի հիմնադրման մասին Համաձայնագիրը, Ստացողի տարածքում Կառավարչի գտնվելու պայմանների մասին Համաձայնագիրը (եթե կիրառելի է), ինչպես նաև ցանկացած այլ համաձայնագրեր և պայմանագրեր, որոնք Կողմերի համար ստեղծում են փոխադարձ իրավունքներ և պարտավորություններ,

- ցանկացած միզազգային կոնվենցիաների և պայմանագրերի դրույթները, որոնք պարտադիր ուժ ունեն Ստացողի համար, հանրաճանաչ են որպես սովորութային իրավունքի պարտադիր նորմերը կոդիֆիկացնող, համապատասխան կարգով կիրառելի են պետությունների և ՄՖԿ նկատմամբ, կամ հաստատված են որպես նման նորմեր,

- ցանկացած միզազգային կոնվենցիաների և պայմանագրերի դրույթները, որոնք պարտադիր ուժ ունեն կամ չունեն Կառավարչի համար, հանրաճանաչ են որպես սովորութային իրավունքի պարտադիր նորմերը կոդիֆիկացնող, համապատասխան կարգով կիրառելի են պետությունների և ՄՖԿ նկատմամբ, կամ հաստատված են որպես նման նորմեր:

- միջազգային սովորույթների այլ ձևեր, ներառյալ պետությունների և ՄՖԿ փորձը, որն օժտված է իրավաբանական պարտավորությունների ստեղծման համար անհրաժեշտ համընդհանրությամբ, հետևողականությամբ և շարունակականությամբ,

- իրավունքի ընդհանուր կիրառելի սկզբունքները:

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով լրացուցիչ կարող են սահմանվել կիրառելի իրավունքի այլ աղբյուրներ:

է) Համաձայնագրով՝ դատարանի որոշումների հարկադիր կատարման մասով կիրառելի իրավունք է հանդիսանում միջազգային հանրային իրավունքը և Ստացողի օրենսդրությունը՝ դրան չհակասող մասով:

ը) Միջնորդ դատավորները որոշումն ընդունում են ձայների մեծամասնությամբ, և նրանց կողմից ընդունված որոշումը վերջնական է և պարտադիր վեճի կողմերի համար:

թ) Եթե Միջնորդ դատավորների որոշումը չի կատարվում այն վեճի կողմերին հանձնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, վեճի յուրաքանչյուր կողմ իրավունք ունի՝

- դիմել դատական կարգով հարցը լուծելու համար կամ հարուցել վարույթ՝ երկրորդ կողմի նկատմամբ որոշման հարկադիր կատարման նպատակով՝ իրավազորություն ունեցող ցանկացած դատարանում,

- հարկադիր կատարել այդ որոշումը դատական կարգադրությամբ,

- երկրորդ մասնակցի հանդեպ կիրառել իրավական պաշտպանության ցանկացած այլ ընդունելի միջոց՝ արբիտրաժային որոշման և Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի դրույթների հարկադիր կատարման նպատակով:

ժ) Սույն բաժնին համապատասխան որևէ վարույթի հետ կապված կամ սույն բաժնին համապատասխան կայացված որևէ որոշման հարկադիր կատարման նպատակով սկսված վարույթի հետ կապված ցանկացած ծանուցումների կամ դատական փաստաթղթերի հանձնումը պետք է իրականացվի Ստանդարտ պայմանների 10.01 բաժնով նախատեսված կարգով: Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի Կողմերը հրաժարվում են ցանկացած նման ծանուցման կամ դատական փաստաթղթի հանձնման այլ եղանակներից:

### ՀՈԴՎԱԾ IX. Ուժի մեջ մտնելը: Գործողության դադարեցումը

**ԲԱԺԻՆ 9.01.** *Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պայմանները*

Ներդրումային վարկի տրամադրման մասին ցանկացած Համաձայնագիր ուժի մեջ է մտնում միայն այն բանից հետո, երբ Կառավարիչը ստանում է իրեն բավարարող ապացույցներ հետևյալ պայմանների կատարման մասին՝

ա) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիրը

- պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի բոլոր իրավասու մարմինների կողմից՝ դրա օրենսդրությամբ սահմանված կարգով,

- Ստացողի անունից ստորագրված է պատշաճ ձևակերպված լիազորություններ ունեցող անձի կողմից,

- իրենից ներկայացնում է Ստացողի վավերական և իրավաբանական ուժ ունեցող պարտավորություն, որը ենթակա է կատարման Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

բ) Կատարված են Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով սույն բաժնի նպատակների համար նախատեսված ցանկացած այլ պայմաններ:

Որպես ուժի մեջ մտնելու պայմանների կատարման հաստատում, Կառավարչին պետք է ներկայացվի Կառավարչին բավարարող իրավաբանի եզրակացություն, որը ընդունելի է նրա համար, կամ, Կառավարչի հետ համաձայնեցված, Կառավարչին բավարարող Ստացողի իրավասու մարմնի եզրակացություն, որը հաստատում է, որ՝

- Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիրը պատշաճ կերպով հաստատված կամ վավերացված է Ստացողի կողմից և իրավաբանորեն պարտադիր է նրա համար այդ համաձայնագրի պայմաններին համապատասխան:

- Կատարված են Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով սույն բաժնի նպատակների համար նախատեսված ցանկացած այլ պայմաններ:

**ԲԱԺԻՆ 9.02.** *Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը*

ա) բացառությամբ Ստացողի և Կառավարչի միջև այլ պայմանավորվածությունների, Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրը, երբ Կառավարիչը ծանուցում է Ստացողին այն մասին, որ նա ընդունել է Ստանդարտ պայմանների 9.01 բաժնին համապատասխան անհրաժեշտ ապացույցները (այսուհետ՝ Ուժի մեջ մտնելու ամսաթիվ):

բ) Եթե մինչև Ուժի մեջ մտնելու ամսաթիվը տեղի է ունեցել իրադարձություն, որի հիման վրա Կառավարիչը կարող էր կասեցնել Ներդրումային վարկի միջոցների տրամանդրման Ստացողի իրավունքը, եթե

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիրն ուժի մեջ լիներ, Կառավարիչն իրավունք ունի հետաձգել սույն բաժնի (ա) կետում նշված ծանուցման ուղարկումը մինչ այն պահը, երբ կդադարեն նման իրադարձությունը կամ իրավիճակը:

**ԲԱԺԻՆ 9.03.** *Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումը ուժի մեջ չմտնելու պատճառով*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի և Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Կողմերի բոլոր պարտավորությունների գործողությունը դադարեցվում է, եթե Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագիրն ուժի մեջ չի մտել ժամկետում, որը սահմանված է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով սույն բաժնի նպատակների համար (այսուհետ՝ Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետ), բացառությամբ այն դեպքերի, երբ Կառավարիչը, քննելով հետաձգման պատճառները, սահմանում է Ուժի մեջ մտնելու ավելի ուշ վերջնաժամկետ: Կառավարիչը անհապաղ ծանուցում է Ստացողին Ուժի մեջ մտնելու նման ավելի ուշ վերջնաժամկետի մասին:

**ԲԱԺԻՆ 9.04.** Ներդրումային *վարկի տրամադրման մասին Համաձայնագրի գործողության դադարեցումը*

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի և Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Կողմերի բոլոր պարտավորությունների գործողությունը անհապաղ դադարեցվում է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով նախատեսված Հիմնական պարտքի և Վարկի բոլոր վճարների վճարումից հետո:

## ՀՈԴՎԱԾ X. Այլ դրույթներ

**ԲԱԺԻՆ 10.01.** *Ծանուցումներ և հարցումներ*

Ցանկացած ծանուցում կամ հարցում, որոնք պետք է կամ կարող են ուղարկվել Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի համաձայն կամ դրա կապակցությամբ, ձևակերպվում են գրավոր: Նման ծանուցումը  կամ հարցումը համարվում են պատշաճ կերպով ուղարկված, եթե դրանք առաքված են փոստատարի կողմից կամ փոստով, տելեքսով կամ ֆաքսով (կամ, եթե դա թույլատրվում է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրով, կապի էլեկտրոնային միջոցների օգնությամբ) կողմին, որին

դրանք պետք է կամ կարող են ուղարկվել, այդ կողմի հասցեով, որը նշված է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում, կամ այլ հասցեով, որի մասին այդ կողմը հայտնել է նման ծանուցում ուղարկող կամ հարցում կատարող կողմին: Առաքումը ֆաքսով հաստատվում է նաև փոստային առաքմամբ:

**ԲԱԺԻՆ 10.02.** *Գործողություններ Ստացողի անունից*

ա) Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում, որի կողմ է հանդիսանում Ստացողը, Ստացողի կողմից նշանակված ներկայացուցիչը կամ ցանկացած անձ, որը պատշաճորեն գրավոր ձևով լիազորված է այդ ներկայացուցչի կողմից նշված նպատակների համար, կարող է կատարել ցանկացած գործողություններ, որոնց կատարումն անհրաժեշտ է կամ թույլատրված է Ներդրումային վարկի տրամադրման մասին նման Համաձայնագրին համապատասխան, և ձևակերպել ցանկացած փաստաթղթեր Ստացողի անունից, որոնց ձևակերպումն անհրաժեշտ է կամ թույլատրված է նման Համաձայնագրով:

բ) Ստացողի կողմից նշանակված նեկայացուցիչը կամ այդ ներկայացուցչի կողմից լիազորված անձը կարող է Ստացողի անունից համաձայնեցնել Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի, որի կողմ է հանդիսանում նա, դրույթների ցանկացած փոփոխություն, գրավոր փաստաթղթի հիման վրա, որը ձևակերպված է այդ ներկայացուցչի կամ լիազորված անձի կողմից, պայմանով, որ նման ներկայացուցչի կարծիքով այդ փոփոխությունը տվյալ պայմաններում հիմնավորված է և չի հանգեցնի Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի շրջանակներում Ստացողի պարտավորությունների ավելացմանը:

**ԲԱԺԻՆ 10.03.** *Ստացողի նեկայացուցչի լիազորությունների հաստատում*

Ստացողը ներկայացնում է Կառավարչին՝

ա) այն անձի կամ անձանց լիազորությունների մասին բավարար ապացույցներ, որոնք Ստացողի անունից կատարելու են ցանկացած գործողություններ կամ ձևակերպելու են ցանկացած փաստաթղթեր, որոնց կատարումը կամ ձևակեպումը նա պահաջում կամ թույլատրում է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրին համապատասխան, որի կողմ նա հանդիսանում է:

բ) Ստանդարտ պայմանների 10.02 բաժնին համապատասխան՝ Ստացողի ներկայացուցչի կողմից լիազորված անձանց ստորագրությունների նմուշները, որոնք հաստատված են Ստացողի լիազորված ներկայացուցչի կողմից:

**ԲԱԺԻՆ 10.04.** *Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի ձևակերպումը*

Ներդրումային վարկի տրամադրման մասին յուրաքանչյուր Համաձայնագիր կազմվում է ռուսերեն լեզվով և կարող է ձևակերպվել մի քանի օրինակով, որոնց քանակը նշվում է Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրում, և որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է բնօրինակ:

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են գրավոր՝ Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից ստորագրությամբ, ուժի մեջ են մտնում Համաձայնագրի համար նախատեսված կարգով, և ուժի մեջ մտնելուց հետո հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրի փոփոխությունները, որոնց կատարումը Ներդրումային վարկի տրամադրման մասին Համաձայնագրին և սույն Ստանդարտ պայմաններին համապատասխան թույլատրվում է ծանուցում ուղարկելու միջոցով, կատարվում են միակողմանի և չեն պահանջում մյուս կողմի լիազոր ներկայացուցչի ստորագրությունը:

**<u>Հավելված թիվ 2</u>**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

**Ներդրումային վարկի պայմանները**

| | |
|---|---|
| **Վարկի արժույթը** | ԱՄՆ դոլար |
| **Ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթիվը** | Ուժի մեջ մտնելու ամսաթվից 108 ամիս: |
| **Ներդրումային վարկի ժամկետը** | Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ մինչև 20 (քսան) տարի, ներառյալ՝ այն ժամանակահատվածը, որի ընթացքում Հիմնական պարտքի մարում չի կատարվում (**Արտոնյալ ժամանակահատված**)՝ Ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած՝ մինչև 5 (հինգ) տարի:<br>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը որոշվում է Համաձայնագրի 7-րդ հոդվածի 7.1 կետին համապատասխան: |
| **Սկզբնական միանվագ միջնորդավճար** | Տոկոսադրույքը՝ 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոս.<br>Սկզբնական միանվագ միջնորդավճարը վճարվում է Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «ա» ենթակետին համապատասխան: |
| **Պահուստավորման միջնորդավճար՝** | չի կիրառվում |
| **Մարժա՝** | չի կիրառվում |

| | |
|---|---|
| **Ռիսկի համար խրախուսագումար՝** | չի կիրառվում |
| **Տոկոսներ** | Տոկոսադրույքը՝ տարեկան 4 (չորս) տոկոս:<br><br>Տոկոսները հաշվեգրվում և վճարվում են Ստանդարտ պայմանների 3.01 բաժնի «գ» ենթակետին համապատասխան:<br><br>Տոկոսների վճարման ամսաթվերը՝ Կիսամյակային վճարումներ՝ յուրաքանչյուր ապրիլի 30-ին և հոկտեմբերի 30-ին՝ սկսած նշված ամսաթվերից ամենամոտից, որը վրա է հասել Ներդրումային վարկի միջոցների առաջին հատկացումից հետո, և վերջացրած Ներդրումային վարկի գծով Հիմնական պարտքի եզրափակիչ վճարման ամսաթվով:<br><br>Ներդրումային վարկի գումարների վրա հաշվեգրված տոկոսները, որոնք ընտրվել են տոկոսների վճարման հերթական ամսաթվից 10 (տասը) աշխատանքային օրվանից պակաս ժամկետում, ենթակա են վճարման տոկոսների վճարման մոտակա հաջորդ ամսաթվին: |
| **Համաձայնագրի շրջանակներում կիրառվող կանոնները և ընթացակարգերը** | ○ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ֆինանսավորվող ծրագրերի գնումների քաղաքականությունը (հաստատված է Հիմնադրամի խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ, թիվ 42 արձանագրություն) (այսուհետ՝ **ԿԶԵՀ գնումների քաղաքականություն**).<br><br>○ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի գնումների անցկացման ընթացակարգերը (հաստատված են Հիմնադրամի խորհրդի 2018 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ, թիվ 42 արձանագրություն) (այսուհետ՝ **ԿԶԵՀ գնումների ընթացակարգեր**).<br><br>○ Կայունացման և զարգացման եվրասիական |

| | |
|---|---|
| | հիմնադրամի միջոցների հատկացման ընթացակարգերը (հաստատված են Հիմնադրամի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ, թիվ 84 արձանագրություն) (այսուհետ՝ **ԿԶԵՀ միջոցների հատկացման ընթացակարգեր**).<br>○ ԱԶԲ-ի պաշտպանական միջոցների քաղաքականության վերաբերյալ 2009թ. կանոնակարգը կամ, ըստ մշակման և հաստատման, ԿԶԵՀ բնապահպանական և սոցիալական քաղաքականությունը և ընթացակարգերը, որոնց կիրառումը համաձայնեցվելու է Համաձայնագրով նախատեսված կարգով:<br>Սույն կետով սահմանված կանոնների և ընթացակարգերի կիրառման՝ Կառավարչի և Ստացողի միջև համաձայնեցված փոփոխությունները կարող են նախաձեռնվել Կառավարչի կամ Ստացողի կողմից և կատարվել Ստացողին Կառավարչի կողմից ծանուցում ուղարկելու միջոցով՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում նշված՝ Կառավարչի ծանուցման օրվանից: |

| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
|---|---|
| ________________ | ______________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |

**<u>Հավելված թիվ 3</u>**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

**Հիմնական պարտքի մարման ժամանակացույցը**

1. Հիմնական նպարտքը ենթակա է մարման յուրաքանչյուր տարվա ապրիլի 30-ին և հոկտեմբերի 30-ին սկսած՝ 2029 թվականի ապրիլի 30-ից և վերջացրած՝ 2044 թվականի ապրիլի 30-ով: Հիմնական պարտքի մարման ժամանակացույցը հաշվարկվում է՝ ելնելով նրանից, որ Ներդրումային վարկի յուրաքանչյուր ընտրված գումար ենթակա է մարման հավասար մասնաբաժիններով Հիմնական պարտքի մարման յուրաքանչյուր ամսաթվին՝ սկսած Հիմնական պարտքի մարման ամենամոտ ամսաթվից, որը հաջորդում է նշված գումարի ընտրությանը, և վերջացրած՝ 2044 թվականի ապրիլի 30-ով, բացառությամբ Ներդրումային վարկի այն գումարների, որոնք ընտրվել են Հիմնական պարտքի մարման հերթական ամսաթվից 10 (տասը) Աշխատանքային օրվանից պակաս ժամկետում, որոնք Հիմնական պարտքի մարման ժամանակացույցում հաշվառվում են՝ սկսած Հիմնական պարտքի մարման հաջորդ ամենամոտ ամսաթվից և վերջացրած՝ 2044 թվականի ապրիլի 30-ով: Անբաժանելի մնացորդները փոխադրվում են Հիմնական պարտքի մարման վերջին ամսաթիվ՝ 2044 թվականի ապրիլի 30:

2. Կառավարիչը Ստացողին ծանուցում է Հիմնական պարտքի մարման ժամանակացույցի յուրաքանչյուր փոփոխության մասին՝ ըստ Ներդրումային վարկի գումարների ընտրանքի, կցելով Հիմնական պարտքի մարման փոփոխված ժամանակացույցը, ինչպես նաև Հիմնական պարտքի մարմանն ուղղված յուրաքանչյուր հերթական վճարման չափի մասին:

3. Ստանդարտ պայմանների՝ Հիմնական պարտքի մարման ժամանակացույցի փոփոխության վերաբերյալ 7.04 բաժինը չեղարկման արդյունքում չի կիրառվում:

| | |
|---|---|
| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
| ________________ | ______________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |

**Հավելված թիվ 4**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

**Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները և ծախսային կատեգորիաները**

| Ծախսային կատեգորիաները | Հատկացված գումարը (ԱՄՆ դոլար) | Ծախսերի ֆինանսավորման մասնաբաժինն ըստ կատեգորիայի |
|---|---|---|
| **Ներդրումային վարկ** | | |
| (1) Աշխատանքներ՝ ըստ Բաղադրիչ 1-ի Գնումների պլանի (առանց հարկերի ու այլ պարտադիր վճարների հաշվառման) | 182,80 | Մասնաբաժիններ չեն կիրառվում** |
| (2) Ապրանքներ, ծառայություններ՝ ըստ Բաղադրիչներ 1-3-ի (առանց հարկերի ու այլ պարտադիր վճարների հաշվառման), և Գործառնական ծախսեր* (առանց հարկերի ու այլ պարտադիր վճարների հաշվառման) | 10,70 | 100% |
| (3) Չնախատեսված ծախսեր (առանց հարկերի ու այլ պարտադիր վճարների հաշվառման) *** | 6,50 | 100% |
| **Ստացողի բյուջեն** | | |
| (1) Աշխատանքներ՝ ըստ Բաղադրիչ 1-ի Գնումների պլանի (առանց հարկերի ու այլ պարտադիր | 129,10 | Մասնաբաժիններ չեն կիրառվում** |

| | | |
|---|---|---|
| վճարների հաշվառման) | | |
| **Ընդամենը՝** | **329,10** | - |

* Համաձայնագրի նպատակներով Գործառնական ծախսեր ասելով պետք է հասկանալ Ծրագրի իրականացման մասով ԾԻԽ-ի ծախսերը, այդ թվում՝ աշխատակիցների աշխատանքի վարձատրությունը, գրասենյակի պահպանությունը, տրանսպորտային միջոցների ապահովման, ինչպես նաև շահագործման և տեխնիկական սպասարկման ծախսերը, կոմունալ ծախսերը, հաղորդակցության ծախսերը, տեղեկատվական համակարգերի և սարքավորումների պահպանության ծախսերը, շահագործման ծախսերը, թարգմանչական ծախսերը, փոստային ծախսերը, գործուղման ծախսերը, տպագրական ծախսերը և այլ ողջամիտ ծախսեր, որոնք անհրաժեշտ են Ծրագրի իրականացման ժամանակ ԾԻԽ-ի գործունեության ապահովման համար՝ Կառավարչի հետ համաձայնեցված Գործառնական ծախսերի բյուջեին համապատասխան:

** Ստացողի կողմից այն ծախսերի համաֆինանսավորումը, որոնք մտնում են (1) Ծախսային կատեգորիայի կազմի մեջ, սկսվում է միայն Ներդրումային վարկի միջոցների ամբողջական հատկացումից հետո՝ ըստ (1) Ծախսային կատեգորիայի:

Համաձայնագրի նպատակներով (3) Ծախսային կատեգորիայի շրջանակներում Չնախատեսված ծախսերի տակ հասկացվում է (1) և (2) Ծախսային կատեգորիաների մասով թույլատրելի ծախսերը ծածկելու համար նախատեսված պահուստը՝ Ներդրումային վարկի միջոցներն ըստ (1) և (կամ) (2) Ծախսային կատեգորիաների ամբողջական ընտրանքի դեպքում:

Ստացողը պարտավորվում է ֆինանսավորել Ծրագրի մասով ցանկացած այլ լրացուցիչ ծախս, որը կարող է առաջանալ դրա իրականացման ընթացքում, և ավելացնել Համաձայնագրի շրջանակներում դրա ֆինանսավորման ընդհանուր գումարը:

Եթե Կառավարչի կարծիքով Ծախսային կատեգորիաների ընթացիկ բաժանումը խոչընդոտում է Ծրագրի իրականացման նպատակների իրագործմանը և ԿԶԵՀ միջոցների արդյունավետ ծախսմանը, ապա Կառավարիչն իրավունք ունի միավորելու Ծախսային կատեգորիաները՝ դրա մասին Ստացողին ծանուցում

ուղարկելով՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնի և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան: Ծախսային կատեգորիաների նման միավորումն ուժի մեջ է մտնում Կառավարչի ծանուցման ամսաթվից:

| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
|---|---|
| ________________ | ______________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |

**<u>Հավելված թիվ 5</u>**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

**Ծրագրի նկարագրությունը և իրականացման կարգը**

1. Ծրագրի նպատակը՝ «Հյուսիս-Հարավ» ավտոճանապարհային միջանցքի հատվածում տարանցիկ փոխադրումների ներուժի բարձրացում և վթարայնության նվազեցում:

2. Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչից և իրականացվելու է Հայաստանի Հանրապետությունում.

**Բաղադրիչ 1.** Ինժեներաշինարարական աշխատանքներ՝ թունելի շինարարություն և M2 ճանապարհի հատվածի վերակառուցում, ինչպես նաև ինժինիրինգի և աշխատանքների կատարման նկատմամբ վերահսկողության ծառայություններ:

**Բաղադրիչ 2.** ՏԿԵՆ-ի և ԾԻԽ-ի (կամ նրանց իրավահաջորդների) ինստիտուցիոնալ ներուժի բարձրացում՝ երկու ենթաբաղադրիչի իրականացման միջոցով.

Ենթաբաղադրիչ 2.1. Ավտոճանապարհային թունելների պահպանության նկատմամբ վերահսկողության նորմատիվային բազայի և համակարգի մշակում, անհրաժեշտ սարքավորումների ցանկի պատրաստում,

Ենթաբաղադրիչ 2.2 Ավտոճանապարհային թունելների պահպանության նկատմամբ վերահսկողության համար սարքավորումների գնում.

**Բաղադրիչ 3.**

Ծրագրի կառավարում, այդ թվում՝ ԾԻԽ-ի գործունեության և աջակցման ապահովում՝ Ծրագրի իրականացման գծով աշխատանքների կատարման ամենօրյա համակարգման հարցում, ներառյալ՝ Ծրագրի մասով ֆինանսների և գնումների կառավարումը, հաշվառման վարումը, միջոցների նպատակային ծախսումը, արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը, շահառուների հետ փոխգործակցությունը, ֆինանսական հաշվետվությունների և այլ հաշվետվությունների կազմումն ու տրամադրումը, շրջակա միջավայրի կառավարման պլանի իրականացման անկախ մոնիթորինգի անցկացման ապահովումը:

3. Ստացողը Ծրագրի իրականացումը և Համաձայնագրի պայմանների կատարումն ապահովում է իր գործադիր իշխանության մարմինների միջոցով՝ նրանց վրա դնելով Ստացողի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան Համաձայնագրի պայմանների կատարման պատասխանատվությունը, մասնավորապես՝

3.1. **ՏԿԵՆ-ը (կամ նրա իրավահաջորդը)՝**

ա) պատասխանատու է Համաձայնագրի պայմաններին համապատասխան Ծրագրի իրականացման ընդհանուր ղեկավարման համար՝ ԾԻԽ-ի աջակցությամբ.

բ) ապահովում է Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում ԾԻԽ-ի շարունակական գործունեությունը, Ծրագրի իրականացման մասով ԾԻԽ-ին պարտականությունների վերապահումը.

գ) պատասխանատու է Կառավարչին Ծրագրի գծով հաշվետվություններ ներկայացնելու համար.

դ) համաձայնեցնում է Կառավարչի հետ արտաքին աուդիտորների կողմից աուդիտի անցկացման ժամկետների փոփոխությունը:

3.2. **ԾԻԽ-ը (կամ նրա իրավահաջորդը)՝**

Պատասխանատվություն է կրում Ծրագրի իրականացման ամենօրյա աշխատանքների համար, ներառյալ՝ ֆինանսների կառավարումը, գնումները, հաշվառման վարումը, միջոցների նպատակային ծախսումը, արդյունավետության մոնիթորինգը և գնահատումը, ֆինանսական հաշվետվությունների և Համաձայնագրով նախատեսված՝ Ծրագրին առնչվող այլ հաշվետվությունների կազմումը և ներկայացումը, Կառավարչի համար ընդունելի արտաքին աուդիտորների կողմից Ծրագրի գծով կատարված ծախսերի աուդիտը, բնապահպանական և սոցիալական պատասխանատվության ոլորտի, ինչպես նաև կիրառվող այլ քաղաքականությունների և ընթացակարգերի պահանջների կատարումը, Ծրագրի համար մշակված շրջակա միջավայրի կառավարման պլանի/կապալառուների կոնկրետ տեղամասի համար շրջակա միջավայրի կառավարման պլանների պատշաճ իրականացման նկատմամբ կանոնավոր վերահսկողությունը՝ պաշտպանական միջոցների համապատասխան ընթացակարգերի կիրառմամբ, և ԾԻԽ հաստիքակազմի համալրումն անհրաժեշտ մակարդակի կոմպետենտությամբ մասնագետներով, ինչը թույլ է տալիս արդյունավետորեն իրականացնել Ծրագիրը:

ԾԻԽ-ի աշխատակիցների կազմը, որակավորումը և իրավասությունները, ինչպես նաև ԾԻԽ-ի կազմի ցանկացած փոփոխություն համաձայնեցվում է Կառավարչի հետ:

### 3.3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (կամ նրա իրավահաջորդը)՝

ա) բացում և վարում է Հատուկ հաշիվ՝ Համաձայնագրի 2.2 կետին համապատասխան.

բ) ապահովում է Ծրագրի համաֆինանսավորման համար Հայաստանի Հանրապետության բյուջեից միջոցների ժամանակին տրամադրումը.

գ) ստորագրում և Կառավարչին է ուղարկում Ներդրումային վարկի միջոցների հատկացման հայտերը.

դ) ապահովում է Ներդրումային վարկի մասով վճարումները լրիվ ծավալով և ժամանակին կատարելը:

4. Ծրագրի իրականացման խմբի մասով՝ Կառավարչի և Ստացողի միջև համաձայնեցված փոփոխությունները կարող են նախաձեռնվել Կառավարչի կամ Ստացողի կողմից և կատարվել Ստացողին Կառավարչի կողմից ծանուցում

ուղարկելու միջոցով՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում նշված՝ Կառավարչի ծանուցման ամսաթվից, կատարվում են Ստացողին Կառավարչի կողմից ծանուցում ուղարկելու միջոցով՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան: Այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում նշված՝ Կառավարչի ծանուցման օրվանից:

| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
|---|---|
| ________________ | ______________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |

**Հավելված թիվ 6**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

## Ծրագրի մոնիթորինգը և գնահատումը

1. Ստացողը մշտապես պետք է իրականացնի Ծրագրի կատարման և դրա նպատակների իրագործման մոնիթորինգ ու գնահատում՝ Կառավարչի հետ համաձայնեցված և **Ծրագրի իրականացման ուղեցույցին** համապատասխան հաստատված՝ մոնիթորինգի ցուցանիշների համաձայն:

2. Ստացողն ապահովում է նշված ժամկետներում Կառավարչի համար ձևով և բովանդակությամբ բավարար հետևյալ հաշվետվությունների ներկայացումը Կառավարչին՝

**Յուրաքանչյուր կիսամյակ՝**

ա) Ծրագրի իրականացման ընթացքի մասին հաշվետվությունները՝ հաշվետու ժամանակահատվածի համար և աճողական հանրագումարով՝ Ծրագրի միջոցառումների իրագործման փաստացի և պլանավորված ժամկետների միջև տարբերությունների պարզաբանմամբ և Ծրագրի արդյունավետ կատարումն ու դրա նպատակների իրագործումն ապահովելու նպատակով հաջորդող ժամանակահատվածում իրականացման համար առաջարկվող միջոցների ներկայացմամբ.

բ) Ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների արժեքներին հասնելու առաջընթացի մասին հաշվետվությունները՝ հաշվետու ժամանակահատվածի համար և աճողական հանրագումարով՝ Ծրագրի արդյունավետ կատարումն ու դրա նպատակների

իրագործումն ապահովելու նպատակով հաջորդող ժամանակահատվածում իրականացման համար առաջարկվող միջոցների ներկայացմամբ.

գ) Ծրագրի շրջանակներում Գնումների պլանի կատարման վերաբերյալ հաշվետվությունները՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ աճողական հանրագումարով՝ կատարողականի փաստացի և պլանավորված ցուցանիշների միջև տարբերությունների պարզաբանմամբ.

դ) Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝

— միջոցների աղբյուրների և օգտագործման մասին հաշվետվությունը,

— ըստ Ծրագրի միջոցառումների միջոցների օգտագործման մասին հաշվետվությունը,

— Հատուկ հաշվեհամարից քաղվածքը,

— ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,

— Հատուկ հաշվեհամարի հավասարակշռված հաշվեկշիռը,

— ծախսերի ամփոփագրերը,

ե) Առաջնային հաշվառման փաստաթղթերը (պայմանագրերի պայմանների համաձայն վճարման համար հիմք հանդիսացող՝ մատակարարների հետ պայմանագրերի, հաշիվ-վավերագրերի/վճարման հաշիվների, ակտերի, ամփոփագրերի կամ այլ փաստաթղթերի պատճենները և այլն), որոնցով հաստատվում են Թույլատրելի ծախսերը՝ 30 000 (երեսուն հազար) ԱՄՆ դոլարից ավելի գումարի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրերով:

Բնապահպանական և սոցիալական մոնիթորինգի գծով հաշվետվությունները:

Առաջին հաշվետվությունները, որոնք նշված են «ա»-«զ» ենթակետերում, պետք է Կառավարչին ներկայացվեն Ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջին օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան 45 (քառասունհինգ) օրացուցային օր հետո: Հետագայում նշված հաշվետվությունները Կառավարչին պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածի յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից 45 (քառասունհինգ) օրացուցային օր հետո: Վերջին հաշվետվությունները Կառավարչին պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան ՆՎ հասանելիության ժամանակահատվածի ավարտի օրվանից 45 (քառասունհինգ) օրացուցային օր հետո:

Այն հաշվետվությունների տրամադրման պարբերականության փոփոխությունը, որոնք նշված են «ա»-«զ» ենթակետերում, կարող է նախաձեռնվել Կառավարչի կամ Ստացողի կողմից և համաձայնեցվել Կառավարչի հետ՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում Կառավարչի՝ նշված ծանուցման ամսաթվից, ինչը համաձայնեցվել է Կառավարչի հետ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:

**Ծրագրի ավարտից հետո՝**

— Ծրագրի ավարտի վերաբերյալ վերջնական հաշվետվությունը՝ Ստանդարտ պայմանների 4.03 բաժնի «դ» ենթակետի դրույթներին համապատասխան:

3. Ստացողը Կառավարչի հետ համատեղ պետք է քննարկի վերոնշյալ հաշվետվությունները և հետագայում ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները Ծրագրի արդյունավետ ավարտման և դրա նպատակների իրագործման համար՝ հաշվի առնելով վերը նշված հաշվետվությունների եզրակացությունները և առաջարկություններն ու տվյալ հարցի վերաբերյալ Կառավարչի կարծիքը:

| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
|---|---|
| _______________ | _____________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |

**<u>Հավելված թիվ 7</u>**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

**Գնումների ընթացակարգերը**

1. Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումներ

Ստացողն իրականացնում է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները Ներդրումային վարկի միջոցների հաշվին՝ ԿԶԵՀ գնումների քաղաքականությանը, ԿԶԵՀ գնումների ընթացակարգերին և Գնումների պլանին համապատասխան:

2. Գնման կիրառելի մեթոդը որոշվում է Գնումների պլանին համապատասխան՝ կախված գնման բնույթից:

3. Ծրագրի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումների կիրառելի մեթոդներն են՝
   3.1. Միջազգային մրցակցային մրցույթը Պետք է Ստացողի կողմից իրականացվեն ԿԶԵՀ Գնումների ընթացակարգերի 15-րդ կամ 16-րդ գլխի դրույթներին համապատասխան, եթե դա նախատեսված է Ծրագրի շրջանակներում Գնումների պլանով: Միջազգային մրցութային մրցույթ անցկացնելու դեպքում թույլատրվում է միայն անգլերենով գնումների փաստաթղթերի օգտագործումը:
   3.2. Ազգային մրցակցային մրցույթը Պետք է Ստացողի կողմից իրականացվեն ԿԶԵՀ Գնումների ընթացակարգերի 17-րդ գլխի դրույթներին համապատասխան, եթե դա նախատեսված է Ծրագրի շրջանակներում

Գնումների պլանով: Ազգային մրցակցային մրցույթը կարող է կիրառվել կնքելու համար՝

ա) ապրանքների ձեռքբերման պայմանագրեր, որոնց արժեքը, ներառյալ Հարկերը, կազմում է մինչև 1 000 000,00 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար.

բ) աշխատանքների կատարման պայմանագրեր, որոնց արժեքը, ներառյալ Հարկերը, կազմում է մինչև 5 000 000,00 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար:

3.3. Գնանշումների հարցումը Պետք է Ստացողի կողմից իրականացվեն ԿԶԵՀ Գնումների ընթացակարգերի 18-րդ գլխի դրույթներին համապատասխան, եթե դա նախատեսված է Ծրագրի շրջանակներում Գնումների պլանով: Գնանշումների հարցումը կարող է կիրառվել կնքելու համար՝

ա) ապրանքների ձեռքբերման պայմանագրեր, որոնց արժեքը, ներառյալ Հարկերը, կազմում է մինչև 100.000,00 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար.

բ) աշխատանքների կատարման պայմանագրեր, որոնց արժեքը, ներառյալ Հարկերը, կազմում է մինչև 200.000,00 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլար:

4. Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների գնումների կիրառելի մեթոդներն են՝

4.1. Որակի և արժեքի վրա հիմնված ընտրություն՝ ԿԶԵՀ Գնումների ընթացակարգերի 33-րդ գլխի դրույթներին համապատասխան.

4.2. Նվազագույն արժեքի վրա հիմնված ընտրություն՝ ԿԶԵՀ Գնումների ընթացակարգերի 34-րդ գլխի դրույթներին համապատասխան.

4.3. Խորհրդատուի որակավորման վրա հիմնված ընտրություն՝ ԿԶԵՀ Գնումների ընթացակարգերի 35-րդ գլխի դրույթներին համապատասխան.

4.4. Անհատական խորհրդատուների ընտրություն՝ ԿԶԵՀ Գնումների ընթացակարգերի 37-րդ գլխի դրույթներին համապատասխան:

5. Կիրառելի մրցութային տիպային փաստաթղթեր՝ ԿԶԵՀ մրցութային տիպային փաստաթղթեր կամ ՎԶՄԲ մրցութային տիպային փաստաթղթեր՝ Կառավարչի հետ համաձայնեցմամբ:

6. Ծրագրի շրջանակներում գնումների իրականացման նկատմամբ վերահսկողության նպատակով Կառավարիչն օգտագործում է նախնական կամ հետագա քննության ընթացակարգերը՝ Գնումների պլանին համապատասխան:

7. Կառավարիչն իրավասու է Հիմնադրամի գնումների քաղաքականությամբ նախատեսված իրավական հետևանքներ կիրառել, եթե Ստացողի կողմից թույլ են տրվել դրանում նշված խախտումներ:

8. Սույն հավելվածով սահմանված շեմային արժեքների փոփոխությունը կարող է նախաձեռնվել Կառավարչի կամ Ստացողի կողմից և համաձայնեցվել Կառավարչի հետ՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:
9. Առաջարկների գնահատում անցկացնելու ժամանակ չեն կիրառվում Հիմնադրամի Գնումների ընթացակարգերով նախատեսված նախապատվությունները:

| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
|---|---|
| ________________ | ______________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |

**<u>Հավելված թիվ 8</u>**

**Եվրասիական զարգացման բանկի և Հայաստանի Հանրապետության միջև՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման մասին 2024թ. հուլիսի «26»-ի համաձայնագրի**

**Միջոցների հատկացման ընթացակարգերը**

1. Ծրագրի շրջանակներում Ստացողը և Կառավարիչը կիրառում են ԿԶԵՀ Միջոցների հատկացման ընթացակարգերը: Կառավարիչն իրավունք ունի կիրառելու նշված փաստաթղթով նախատեսված իրավական հետևանքները, եթե Ստացողի կողմից թույլ են տրվել դրանում նշված խախտումներ: Կառավարիչը Ստացողին կարող է ծանուցել նշված փաստաթղթերի ամենավերջին արդիական խմբագրությունների կիրառման անհրաժեշտության մասին:

2. Ներդրումային վարկի միջոցների հատկացումն Ստացողին իրականացվում է՝

   2.1. Ներդրումային վարկի միջոցների միջոցների հաշվին վճարման ենթակա՝ Ստացողի ակնկալվող ծախսերի ավանսավորման մեթոդով՝ Ներդրումային վարկի միջոցները Հատուկ հաշվին փոխանցելու միջոցով,

   2.2. ծախսերի փոխհատուցման մեթոդով, որոնք ենթակա են վճարման Ներդրումային վարկի միջոցների հաշվին և որոնք Ստացողի կողմից վճարվել են սեփական միջոցների հաշվին,

   2.3. մատակարարներին պայմանագրերով կատարվող ուղղակի վճարումների մեթոդով, որոնք ենթակա են վճարման Ներդրումային վարկի միջոցների հաշվին:

3. Ներդրումային վարկի առավելագույն գումարը, որը կարող է լինել Հատուկ հաշվեհամարին (այսուհետ՝ **Առավելագույն մնացորդ**), կազմում է 10 000 000,00 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար:

4. Հատուկ հաշվեհամարին միջոցների հատկացման հայտի առավելագույն գումարը հաշվարկվում է որպես առավելագույն մնացորդի և Հատուկ հաշվեհամարին ավելի վաղ փոխանցված՝ Ստացողի կողմից փաստաթղթերով չհաստատված գումարի տարբերություն:

5. Առավելագույն մնացորդի գումարի փոփոխությունը կարող է համաձայնեցվել Կառավարչի հետ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:

6. Միջոցների հատկացման համապատասխան հայտով որպես միջոցների նպատակային օգտագործումը հաստատող՝ Ստացողի կողմից ներկայացվելու ենթակա փաստաթղթերն են՝

   6.1. ավանսավորման մեթոդով միջոցների հատկացման հայտերի դեպքում (Հատուկ հաշվեհամարի համալրման համար)՝ Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերին համապատասխան այն փաստաթղթերը, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են կա՛մ Հատուկ հաշվեհամարին միջոցներ հատկացնելու հայտի կազմում, կա՛մ նախապես՝ Ծրագրի վերաբերյալ այն հաշվետվությունների կազմում, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2-րդ կետին համապատասխան.

   6.2. ծախսերի փոխհատուցման մեթոդով միջոցների հատկացման հայտերի դեպքում՝ Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2-րդ կետի «դ» և «ե» ենթակետերին համապատասխան այն փաստաթղթերը, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են կա՛մ միջոցներ հատկացնելու հայտի կազմում, կա՛մ նախապես՝ Ծրագրի վերաբերյալ այն հաշվետվությունների կազմում, որոնք Ստացողի կողմից ներկայացվում են Համաձայնագրի թիվ 6 հավելվածի 2-րդ կետին համապատասխան.

   6.3. ուղղակի վճարման մեթոդով միջոցների հատկացման հայտերի դեպքում՝ առաջնային հաշվառման փաստաթղթերը (ապրանքների և ծառայությունների մատակարարների հետ պայմանագրերի, հաշիվ-վավերագրերի, ակտերի, ամփոփագրերի, վճարումների ռեեստրների և

այլնի պատճենները), որոնցով հաստատվում են թույլատրելի ծախսերը, և այլ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք կարող են հիմնավորված կերպով պահանջվել Կառավարչի կողմից:

7. Միջոցների հատկացման հայտի կազմում ներառված փաստաթղթերի ցանկը կարող է փոփոխվել Կառավարչի հետ համաձայնեցմամբ՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:

8. Ստացողը պարտավոր է Կառավարչին վերադարձնել Հատուկ հաշվեհամարին ավանսավորված Ներդրումային վարկի միջոցները, որոնց նպատակային օգտագործումը Ստացողի կողմից փաստաթղթերով չի հաստատվել՝ Ներդրումային վարկի հասանելիության ժամանակահատվածի ավարտի ամսաթվից հետո 4 (չորս) ամսվա ընթացքում:

9. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Ռետրոակտիվ ֆինանսավորման իրականացման հնարավորություն: Ռետրոակտիվ ֆինանսավորման սահմանային գումարը կազմում է 2 500 000,00 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար: Ամսաթիվը, որից հետո կրած ծախսերը ենթակա են Ռետրոակտիվ ֆինանսավորման, համարվում է Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը:

10. Ավանսավորման, ծախսերի փոխհատուցման և ուղղակի վճարումների համար միջոցների հատկացման Հայտի նվազագույն գումարը կազմում է 100 000,00 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար: Ռետրոակտիվ ֆինանսավորման շրջանակներում ծախսերի փոխհատուցման մեթոդի համար Միջոցների հատկացման հայտի Նվազագույն գումար չի սահմանվում:

11. Ուղղակի վճարման մեթոդով միջոցների հատկացման հայտով պետք է նախատեսվի վճարում մեկ կոնտրագենտի:

12. Սույն հավելվածով սահմանված շեմային արժեքների փոփոխությունը կամ միջոցների հատկացման այլ մեթոդների, այդ թվում՝ ԿԶԵՀ Միջոցների հատկացման ընթացակարգերով չնախատեսված մեթոդների կիրառումը կարող է նախաձեռնվել Կառավարչի կամ Ստացողի կողմից և համաձայնեցվել Կառավարչի հետ՝ Ստացողի գրավոր դիմումի հիման վրա՝ Ստանդարտ պայմանների 10.01 բաժնին և 10.04 բաժնի «գ» կետին համապատասխան Կառավարչի կողմից Ստացողին ծանուցում ուղարկելու միջոցով, և ուժի մեջ է մտնում նշված ծանուցման օրվանից:

| ՍՏԱՑՈՂ | ԿԱՌԱՎԱՐԻՉ |
| --- | --- |
| _______________ | _____________ |
| Ա. Վ. Պողոսյան | Շիրոկով Ա.Գ. |
| Հայաստանի Հանրապետության կողմից՝ | Եվրասիական զարգացման բանկի կողմից՝ |